ԳԼՈԲՈՒՍ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

2

ԵՐԵՎԱՆ

2009

ԳԼՈԲՈՒՍ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 2, 2009

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
Սնակ Սարուխանյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔ
Տաթևիկ Քարաուղլանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սնակ Սարուխանյան
Տարածաշրջանային էներգետիկ
զարգացումներ 3

Կարեն Վերանյան
ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտ.
«Միջազգային էներգետիկայի
հեռանկարները 2008թ.» զեկույցը 8

Արմեն Մանվելյան
Էներգետիկ անվտանգության որոշ
առանձնահատկություններ 25

Սերգեյ Մինասյան
Հայաստան-Թուրքիա. քաղաքական
նոր փո՞ւլ 32

Արաքս Փաշայան
Թուրք-իսլամական գործոնը Վրաստանում 39

Արտակ Գրիգորյան
Կնեսետի ընտրությունները և քաղաքական
նոր զարգացումներն Իսրայելում 45

Կարեն Վերանյան
Ադրբեջանի ռազմարդյունաբերության ձևավորումը.
Հարավային Կովկասը՝ ապակայունացման շեմին 63

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Սնակ Սարուխանյան

Հոդվածն անդրադառնում է Հարավային Կովկասում և հարևան երկրներում վերջին շրջանում տեղ գտած էներգետիկ զարգացումներին: Հիմնական ուշադրությունը հատկացվել է էներգետիկ ոլորտում միջպետական համագործակցության քաղաքական խնդիրներին:

Հայաստանի Հանրապետություն

Վերջին մեկ ամիսը էներգետիկ նախագծերի իրականացման և դրանց հեռանկարների կոնկրետ մատնանշման տեսանկյունից, հավանաբար, ամենակարևորը կդառնա Հայաստանի համար ընթացիկ տարում: Դա պայմանավորված է Հայաստանի նախագահի՝ ապրիլին Իրան կատարած պաշտոնական այցով, որի հետ են կապվում Հայաստանի համար կարևորագույն էներգետիկ նախագծերի հեռանկարները: Դրանք են. Իրան-Հայաստան գազատարը, Իրան-Հայաստան պատրաստի նավթամթերքների համար նախատեսված նավթատարը, Որոտան գետի վրա Մեղրիում հզոր ՀԷԿ-ի կառուցումը, նավթավերամշակման գործարանը, ինչպես նաև երկաթգիծը, որը ոչ միայն կարևոր տրանսպորտային, այլ նաև էներգատրանսպորտային նշանակություն ունեցող կառույց է հանդիսանալու:

Հայ-իրանական բարձր մակարդակի բանակցությունները կարելի է համարել առավել քան արդյունավետ ոչ միայն քաղաքական, այլև էներգետիկ նշանակության տեսանկյունից: Բանակցությունների արդյունքում և դրանցից հետո հայ և իրանական կողմերը կայացրին մի շարք կարևոր որոշումներ.

1. Իրանը կֆինանսավորի Մեղրիում, Արաքսի ափին նոր հզոր ՀԷԿ-ի կառուցումը: Իրանական կողմի ներդրումը կկազմի 280 միլիոն ԱՄՆ դոլար, որը Հայաստանը կփոխհատուցի էլեկտրաէներգիայով:
2. Ապրիլի 16-ին Հայաստանի և Իրանի տրանսպորտի նախարարները ստորագրեցին համաձայնագիր Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման մասին: Երկաթգծի ընդհանուր երկարությունը պետք է կազմի 470 կմ, որից 410-ն անցնելու է Հայաստանի տարածքով:

Կարելի է սպասել, որ առաջիկա ամիսներին այս երկու ուղղություններով ակտիվ աշխատանք կսկսվի, ինչը կարող է մեծացնել երրորդ կողմերի հետաքրքրվածությունը, համապատասխան ներդրումային հոսք և դաշտ ապահովել նախագծերի լիարժեք իրականացման համար:

Իրան

Իրանի էներգետիկ ոլորտի հիմնական իրադարձությունը ապրիլի սկզբին ծագած ռուս-թուրքմենական գազային վեճն էր: Այն պայմանավորված էր Թուրքմենստանից Ռուսաստան գնացող գազատարում *(ՍԱՊ-4)* տեղի ունեցած պայթյունով, որում թուրքմենական կողմը մեղադրեց ռուսական «Գազպրոմին»: Ըստ թուրքմենական կողմի, ռուսական ընկերությունը որոշ ժամանակով փակել է գազատարը, իսկ Թուրքմենստանից եկող գազի հզոր ճնշման տակ այն պայթել է: Թուրքմենստանի նախագահ Գ.Բերդիմուհամեդովը պայթյունից երկու օր անց կառավարության նիստի ժամանակ հայտարարեց, որ ռուսական կողմը հրաժարվում է ընդունել մեղքը և չի պատրաստվում փոխհատուցել վնասները, ուստի իր հրահանգով Իրան պետք է մեկնի «Թուրքմենգազ» պետական ընկերության նախագահ Բ.Խոջամուհամեդովը, որը պետք է պայմանավորվածություն ձեռք բերի թուրքմենական գազն Իրանին վաճառելու վերաբերյալ:

Թուրքմենա-ռուսական գազային կոնֆլիկտը որոշ առումով օրինաչափ է և անմիջականորեն կապված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ: Բանն այն է, որ Եվրոպայում և Ռուսաստանում ճգնաժամի պատճառով գազի սպառումը նվազել է, իսկ սեպտեմբեր-հոկտեմբերին, երբ երկարացվելու են ռուս-եվրոպական գազային պայմանագրերի ժամկետները, գազի գինը զգալիորեն կընկնի: Այս պայմաններում Ռուսաստանի համար բավական դժվար է Կենտրոնական Ասիայի բնական գազը վերավաճառողի դերը շարունակելը նույնքան արդյունավետությամբ, որքան նախկինում: Շահույթի կրճատման պայմաններում ռուսական էներգետիկ ընկերություններին, այդ թվում նաև «Գազպրոմին», դժվար է լինելու ապահովել ոչ միայն սեփական, այլև պետության արտաքին քաղաքական շահերը: Իսկ ռուս-թուրքմենական գազային կոնֆլիկտն այս ամենի վկայությունն ու արդյունքն է:

Պաշտոնական Թեհրանը նավթի նախարարի մակարդակով հայտարարեց, որ պատրաստ է վերականգնել թուրքմենա-իրանական էներգետիկ համագործակցությունը նախկին ծավալներով: Միևնույն ժամանակ, իրանական և թուրքմենական կողմերի համար շատ դժվար կլինի դա անել, քա-

նի որ համաձայն «Գազպրոմի» և «Թուրքմենգազի» միջև կնքված պայմանագրի՝ ռուսական կողմը պարտավորվել է գնել թուրքմենական գազի ողջ ծավալը: Բացի այդ, մարտի 15-ին Ռուսաստանի էներգետիկայի նախարար Ս.Շմատկոն և Իրանի նավթի նախարար Գ.Նոզարին ստորագրել են ռուս-իրանական հռչակագիր, որի համաձայն՝ ռուսական «Գազպրոմը» պետք է թուրքմենական գազ մատակարարի Իրանի հյուսիսին: Փաստորեն, Իրանն այսօր արդեն թուրքմենական գազը մատակարարող ունի, և այդ մատակարարողը ոչ թե «Թուրքմենգազն» է, այլ ռուսական «Գազպրոմը»: Հարկ է նշել, որ ինքնուրույն դեպի Իրան գազ արտահանելու համար «Թուրքմենգազը» կամ պետք է հրաժարվի «Գազպրոմի» հետ կնքած «մեծ պայմանագրից», կամ էլ «Գազպրոմն» ինքը պետք է պաշտոնապես հրաժարվի գնել թուրքմենական գազը ողջ ծավալով: Այլ դեպքերում գազի արտահանումը Իրան կհամարվի անօրինական:

Ինչևէ, ռուս-թուրքմենական հարաբերություններում Իրան-Թուրքմենստան էներգետիկ համագործակցության զարգացումներ կարելի է գրանցել առաջիկա ամիսների ընթացքում:

Ադրբեջան

Ադրբեջանի համար էներգետիկ քաղաքականության տեսանկյունից անցած ամսվա ամենակարևոր զարգացումն ակնհայտորեն կապված է երկրի նախագահ Ի.Ալիևի՝ Մոսկվա կատարած այցի հետ: Այցելության ենթատեքստը հիմնականում քաղաքական էր, քանի որ տնտեսական կամ էներգետիկ ոլորտներում համագործակցության մասին լուրջ փաստաթղթեր չկնքվեցին: Սակայն Դ.Մեդվեդևի հետ բանակցություններից հետո Ի.Ալիևը հայտարարեց, որ Բաքուն նպատակ ունի դիվերսիֆիկացնել գազի արտահանման ճանապարհները, իսկ Դ.Մեդվեդևն իր հերթին ասաց, որ ադրբեջանական գազը գնելու՝ Ռուսաստանի պատրաստակամությունն ուժի մեջ է, և կողմերը կարող են համապատասխան որոշման գալ այս հարցի շուրջ:

Ռուս-ադրբեջանական էներգետիկ համագործակցության խորացման անհրաժեշտության մասին Բաքվում սկսել են խոսել, հիմնականում, հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր կարգավորման հետ կապված: Ռուսաստանի հետ էներգետիկ համագործակցության խորացման սպառնալիքով, որի իրականացումը լուրջ հարված կհասցնի թուրքական շահերին, ադրբեջանական իշխանությունները, կարծես թե, փորձում են ազդել հայ-թուրքական սահմանի բացման ուղղությամբ Անկարայի քաղաքականության վրա: Սակայն դեռևս պարզ չէ՝ որքանով են անկեղծ թե՛ Ան-

կարայի և թե՛ Բաքվի դիրքորոշումները, և, որ պակաս կարևոր չէ, որքանով են դրանք իրարից անկախ:

Ադրբեջանի տրանսպորտային և էներգետիկ քաղաքականության առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև Ադրբեջանի տրանսպորտի նախարարի ապրիլի 1-ի հայտարարությունը, թե Բաքուն գալիք տարի ամբողջովին կֆինանսավորի Ղեզվին-Ռեշտ-Ասթարա երկաթգծի այն հատվածի շինարարությունը, որն անցնում է Ադրբեջանի տարածքով: Աշխատանքների ընդհանուր գինը կարող է կազմել մոտ 40 մլն դոլար: Ադրբեջանցի նախարարի հայտարարությունն ուղղակիորեն կապված էր այն բանի հետ, որ նույն օրը Սանկտ Պետերբուրգում Իրանի, Ադրբեջանի և Ռուսաստանի երկաթգծերի ընկերությունները վերջապես, ութամյա բանակցություններից հետո, հուշագիր են ստորագրել Ղեզվին-Ռեշտ-Ասթարա երկաթգծի կառուցման վերաբերյալ: Թե ինչ ապագա կունենա այս նախագիծը, դժվար է ասել, սակայն պարզ է, որ այն անմիջականորեն կապված է Իրանի գործողությունների հետ, քանի որ հենց Իրանի տարածքում պետք է իրականացվի շինարարության մեծ մասը: Պետք է կառուցվի մոտ 510 կմ երկաթգիծ, որի ընդհանուր արժեքը կարող է անցնել 1.5 մլրդ դոլարից: Իրանական կողմից դեռ չեն եղել հայտարարություններ այն մասին, որ նախագիծը ֆինանսավորվելու է հենց իրանական բյուջեի կողմից: Ֆինանսավորման հնարավոր աղբյուրների մասին հիշատակում չկա նաև Սանկտ Պետերբուրգում ստորագրված հռչակագրում: Սա վկայում է այն մասին, որ շինարարական աշխատանքները, հավանաբար, կարող են դեռ երկար ձգձգվել, ինչը կարող է նվազեցնել նախագծի մրցունակությունը: Միևնույն ժամանակ, բավական կարևոր պետք է համարել Իրան-Հայաստան երկաթգծի կառուցումը, որը կարող է արդյունավետ և մրցունակ տրանսպորտային հանգույց ստեղծել Պարսից ծոցի և Սև ծովի միջև:

Թուրքիա

Բավական հետաքրքիր զարգացումներ են տեղի ունենում Ռուսաստան-Թուրքիա էներգետիկ համագործակցության ոլորտում: Շուրջ 5 տարի է արդեն, ինչ Մոսկվայի և Անկարայի միջև բանակցություններ են ընթանում «Երկնագույն հոսք-2» գազատարի կառուցման վերաբերյալ: Դրանց անհաջողությունը հիմնականում կապված է այն բանի հետ, որ կողմերը չեն որոշել այն հարցը, թե ինչ նպատակով է կառուցվելու գազատարը: Թուրքական կողմը նպատակ ունի վերավաճառել ռուսական գազը, ինչին համաձայն չէ «Գազպրոմը»: Այսպիսին են, կամ ավելի ճիշտ՝ էին կողմերի

դիրքորոշումները: Սակայն վերջին շրջանում գազատարի կառուցման հեռանկարներին նոր շունչ է հաղորդել Իսրայելը, որը, կարծես թե, շահագրգռված է այս գազատարի միջոցով ռուսական գազ ստանալ: Այս մասին խոսակցություններ և ոչ պաշտոնական տեղեկատվություն միշտ էլ եղել են, սակայն մարտի 3-ին դրանք պաշտոնական մոտեցման տեսք ստացան: Այդ օրը «Գազպրոմ» ընկերության ղեկավար Ա.Միլլերի հետ հանդիպմանը Ռուսաստանի վարչապետ Վ.Պուտինն ասաց, որ հեռախոսազրույց է ունեցել Իսրայելի նորընտիր վարչապետ Բ.Նեթանյահուի հետ, որի ժամանակ կարևորվել է Թուրքիայի տարածքով դեպի Իսրայել գնացող գազատարի ստեղծման հարցը:

Ռուսաստանի վարչապետի հայտարարությունից հետո ռուսական և թուրքական մամուլում վերլուծություններ, հոդվածներ և հարցազրույցներ հայտնվեցին՝ նվիրված «Երկնագույն հոսք-2» գազատարի կառուցմանը և դրա հեռանկարներին: Ըստ թուրքական մամուլի հաղորդագրությունների, գազատարի կառուցման մասին բանակցություններն ակտիվացել են մարտի վերջին, Ա.Միլլերի և Թուրքիայի էներգետիկայի նախարար Հ.Գյուլերի հանդիպման ժամանակ: Ըստ ռուսական աղբյուրների՝ գազատարի կառուցման շուրջ բանակցություններ վարելու համար ապրիլի երկրորդ կեսին «Գազպրոմի» ղեկավարը կմեկնի Թել Ավիվ: Ըստ թուրք վերլուծաբան Ն.Պամիրի, ռուսական կողմը մինչև գազատարի կառուցումը պետք է պայմանագիր կնքի Իսրայելի հետ, իր վրա վերցնի պարտավորություններն ու ռիսկերը, քանի որ Անկարան խուսափելու է այս նախագծի իրականացման գործում իսլամական հասարակության առջև որպես ակտիվ խաղացող հանդես գալուց. դա կվնասի նրա հեղինակությանը:

Հոդվածում նշված զարգացումները վկայում են այն մասին, որ տարածաշրջանային էներգետիկ գործընթացները նոր փուլ են թևակոխում, որի ընթացքում հնարավոր են նոր պայմանագրերի կնքում և նախագծերի իրականացում: Դրանք կարող են լուրջ ազդեցություն ունենալ նաև տարածաշրջանային քաղաքական զարգացումների վրա:

ԱՄՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ. «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 2008Թ.» ԶԵԿՈՒՅՑԸ

Կարեն Վերանյան

2008թ. սեպտեմբերին ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի Էներգետիկ տեղեկատվության վարչությունը հրապարակեց «Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.» տարեկան զեկույցը *(Intrnational Energy Outlook_2008),* որը նվիրված էր 2005-2030թթ. համաշխարհային էներգետիկայի հեռանկարների սցենարային կանխատեսումներին: Զեկույցի փորձագիտական կանխատեսումներում ներկայացված տարածաշրջաններն ու առանձնացված երկրները դասակարգված են երկու հիմնական՝ ՏՀԶԿ[1] անդամ պետությունների և այդ կազմակերպությանը չանդամակցող երկրների խմբերում: ՏՀԶԿ անդամ պետությունները ներկայացվում են երեք հիմնական ենթախմբում՝ Հյուսիսային Ամերիկան (ԱՄՆ, Կանադա, Մեքսիկա), ՏՀԶԿ եվրոպական հատվածը և ՏՀԶԿ ասիական տարածաշրջանը (Ճապոնիա, Հարավային Կորեա, Ավստրալիա և Նոր Զելանդիա): ՏՀԶԿ անդամ չհանդիսացող երկրներն ընդգրկված են հետևյալ հինգ ենթախմբերում՝ ոչ ՏՀԶԿ Եվրոպա և Եվրասիա, ոչ ՏՀԶԿ Ասիա, Աֆրիկա, Մերձավոր Արևելք և Կենտրոնական ու Հարավային Ամերիկա: Ռուսաստանը ներկայացված է ոչ ՏՀԶԿ Եվրոպա ու Եվրասիա տարածաշրջանում, իսկ Չինաստանն ու Հնդկաստանը՝ ՏՀԶԿ-ին չանդամակցող ասիական խմբում:

«Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.» զեկույցի մեթոդաբանության կարևոր առանձնահատկություններից է այն, որ փորձագիտական գնահատականներն ու կանխատեսումները հիմնված են միայն համաշխարհային «շուկայացված» էներգետիկայի *(world marketed energy)* վիճակագրական տվյալների վրա: Ինչ վերաբերում է «չշուկայացված»

[1] ՏՀԶԿ-Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն *(OECD),* որի անդամ են հանդիսանում 30 երկրներ (1961թ. անդամակցած՝ Ավստրիա, Բելգիա, Կանադա, Դանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Իսլանդիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Պորտուգալիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, Թուրքիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, հետագայում անդամակցած՝ Ճապոնիա, Ֆինլանդիա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Մեքսիկա, Չեխիա, Հարավ. Կորեա, Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա):

էներգետիկայի աղբյուրներին, որոնք կարևոր նշանակություն ունեն որոշ զարգացող երկրներում, դրանք չեն ներառվել կանխատեսումներում:

Կանխատեսումները հիմնված են երեք սցենարների վրա, որոնք ենթադրում են բարձր, միջինացված և ցածր ցուցանիշներ պարունակող սցենարային տարբերակներ: Հոդվածում ներկայացված տեղեկատվության տվյալները լուսաբանվում են՝ համաձայն միջինացված սցենարային կանխատեսումների:

Համաշխարհային էներգետիկայի սպառման աճ 2005-2030թթ.

«Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.» զեկույցի գնահատականների համաձայն, 2005-2030թթ. համաշխարհային էներգետիկայի (շուկայացված) սպառումը կաճի շուրջ 50%-ով: Եթե 2005թ. համաշխարհային էներգետիկայի սպառումը կազմում էր 462 կվադրիլիոն Բջմ (Բրիտանական ջերմային միավոր), ապա 2015թ. այդ ցուցանիշն արդեն կհաշվվի 563, իսկ 2030թ.՝ 695 կվադրիլիոն Բջմ (*տե՛ս Աղյուսակ 1*): Չնայած նշված ժամանակաշրջանում նավթի ու բնական գազի բարձր գները կպահպանվեն և կարող են երկարաժամկետ հեռանկարում մասնակիորեն դանդաղեցնել համաշխարհային էներգետիկայի պահանջարկի աճը, այնուամենայնիվ, համաշխարհային էներգետիկայի սպառման արագ աճը կպահպանվի՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության կայուն աճի ու զարգացող երկրներում բնակչության թվաքանակի ավելացմամբ:

Աղյուսակ 1

Համաշխարհային շուկայացված էներգետիկայի սպառումը՝ ըստ ՏՀԶԿ անդամ և նրան չանդամակցող երկրների, 2005-2030թթ., կվադրիլիոն Բջմ

Տարածաշրջան	*2005*	*2010*	*2015*	*2020*	*2025*	*2030*
ՏՀԶԿ	**240,9**	**249,7**	**260,5**	**269,0**	**277,6**	**285,9**
Հյուսիսային Ամերիկա	121,3	126,4	132,3	137,8	143,4	148,9
Եվրոպա	81,4	83,9	86,8	88,5	90,4	92,0
Ասիա	38,2	39,3	41,4	42,7	43,7	44,9
Ոչ ՏՀԶԿ	**221,3**	**262,8**	**302,5**	**339,4**	**374,2**	**408,8**
Եվրոպա և Եվրասիա	50,7	55,1	59,5	63,3	66,0	69,1
Ասիա	109,9	137,1	164,2	189,4	215,3	240,8
Մերձավոր Արևելք	22,9	26,4	29,5	32,6	34,7	36,8
Աֆրիկա	14,4	16,5	18,9	20,9	22,5	23,9
Կենտր./Հար. Ամերիկա	23,4	27,7	30,5	33,2	35,7	38,3
Համաշխարհային, ընդհ.	**462,2**	**512,5**	**563,0**	**608,4**	**651,8**	**694,7**

Աղբյուրը՝ ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտ. «Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.:

2005-2030թթ. համաշխարհային էներգետիկայի պահանջարկի աճի ամենաբարձր ցուցանիշը կարձանագրվի ՏՀԶԿ-ին չանդամակցող երկրների տնտեսություններում, որտեղ համընդհանուր էներգետիկ պահանջարկը կաճի շուրջ 85%-ով, իսկ ՏՀԶԿ անդամ պետություններում այդ ցուցանիշը կկազմի ընդամենը 19%: Չինաստանն ու Հնդկաստանը, որոնք համարվում են ամենաարագ աճող տնտեսություններով ՏՀԶԿ-ին չանդամակցող պետություններ, հեռանկարում հանդիսանալու են համաշխարհային էներգետիկայի սպառման խոշորագույն կենտրոնները: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ եթե 1980թ. Չինաստանի ու Հնդկաստանի մասնաբաժինը, միասին վերցրած, կազմում էր համաշխարհային էներգետիկայի սպառման 8%-ից էլ քիչ մասը, ապա 2005թ. այդ ցուցանիշն աճեց մինչև 18%-ի: Գալիք 25 տարիների ընթացքում նրանց ցուցանիշը, միասին վերցրած, կրկնակի կավելանա և 2030թ. կկազմի համաշխարհային էներգետիկայի սպառման ¼-ը: Համեմատության համար նշենք, որ համաշխարհային էներգետիկայի սպառման մեջ ԱՄՆ մասնաբաժինը 2005թ. 22% էր, իսկ 2030թ. այն նվազման միտում է արձանագրելու՝ կազմելով ընդհանուրի մոտ 17%-ը:

Կանխատեսվող ժամանակահատվածում ՏՀԶԿ անդամ չհանդիսացող մնացյալ տարածաշրջաններում նույնպես նկատվելու է էներգիայի սպառման կտրուկ աճ: Էներգիայի սպառման շուրջ 60%-ի աճ նախատեսվում է Մերձավոր Արևելքի, Աֆրիկայի, Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի տարածաշրջաններում: Ինչ վերաբերում է ՏՀԶԿ-ին չանդամակցող Եվրոպայի ու Եվրասիայի երկրներին՝ ներառյալ Ռուսաստանը, հետխորհրդային հանրապետությունները, այստեղ էներգիայի սպառումը կունենա շուրջ 36%-ի աճ:

Պետք է նշել, որ 1980-2030թթ. կտրվածքով համաշխարհային շուկայացված էներգետիկայի սպառման հաշվեկշռում մինչև վերջերս (1980-2007/8թթ.) ՏՀԶԿ անդամ պետությունների տնտեսություններում էներգիայի սպառման ցուցանիշները, որպես կանոն, գերազանցել են այդ կազմակերպությանը չանդամակցող երկրների ցուցանիշներին: 2010թ. սկսած, ինչպես պատկերված է *Գրաֆիկ 1-ում,* ՏՀԶԿ-ին չանդամակցող երկրներում էներգիայի սպառման տեմպերը կայուն կերպով գերազանցում են ՏՀԶԿ երկրների ցուցանիշներին: Ընդ որում, առանձնացված երկու հիմնական խմբերի երկրների միջև ցուցանիշային տարբերությունը նշված ժամանակահատվածում աստիճանաբար մեծացման միտում է արձանագրում:

Գրաֆիկ 1
Համաշխարհային շուկայացված էներգետիկայի սպառումը՝ ըստ ՏՀԶԿ և ոչ ՏՀԶԿ երկրների, 2005-2030թթ., կվադրիլիոն, Բջմ



Գրաֆիկ 2
Համաշխարհային շուկայացված էներգետիկայի սպառումը՝ ըստ վառելիքատեսակի, 1980-2030թթ.



Աղբյուրը՝ ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտ. «Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.»

Համաշխարհային էներգետիկայի սպառումը՝ ըստ էներգետիկ աղբյուրների

«Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.» զեկույցի միջինացված սցենարով, 2005-2030թթ. կնկատվի համաշխարհային շուկայացված էներգետիկայի սպառման աճ՝ ի հաշիվ բոլոր վառելիքային աղբյուրների (*տե՛ս գրաֆիկ 2*)։ Չնայած հեղուկ վառելիքը և նավթային այլ արտադրանքը կշարունակեն մնալ համաշխարհային էներգետիկայի կարևոր աղբյուրներ, համաշխարհային շուկայացված էներգետիկայի սպառման մեջ հեղուկ վառելիքի մասնաբաժինը, պայմանավորված նավթի համաշխարհային բարձր գներով, ինչպես և այլ էներգետիկ աղբյուրների մասնաբաժնի ավելացմամբ, կարող է նվազել։ Կանխատեսվող ժամանակահատվածում նախատեսվում է աշխարհի բոլոր տարածաշրջանների էլեկտրաէներգիայի արտադրությունում, բացառությամբ Մերձավոր Արևելքի, հեղուկ վառելիքի սպառման մասնաբաժնի նվազում։

Միջինացված սցենարի համաձայն, 2005-2030թթ. հեղուկ վառելիքի համաշխարհային սպառումը կաճի տարեկան միջինը 1,2%-ով և 2005թ. օրական 83,6 մլն բարելից[1] 2015թ. կավելանա մինչև 95,6 մլն, իսկ 2030թ. այդ ցուցանիշն արդեն կկազմի 112,5 մլն բարել: Ընդ որում՝ հեղուկ վառելիքի ընդհանուր սպառման աճի զգալի հատվածը բաժին է ընկնելու ՏՀԶԿ-ին չանդամակցող ասիական տարածաշրջանի երկրներին ու Մերձավոր Արևելքին, որտեղ կանխատեսվում է տնտեսական զգալի աճ: ՏՀԶԿ-ին չանդամակցող ասիական երկրներում հեղուկ վառելիքի սպառումը կավելանա օրական 16 մլն բարելով (եթե 2005թ. այն կազմում էր օրական 15,3 մլն բարել, ապա 2030թ. կկազմի օրական 30,8 մլն բարել): Այս երկրների շարքում հեղուկ վառելիքի պահանջարկի ամենամեծ աճը կարձանագրվի Չինաստանում ու Հնդկաստանում, որոնք միասին վերցրած կկազմեն օրական 11,5 մլն բարել՝ այդ տարածաշրջանի հեղուկ վառելիքի սպառման աճի ճնշող մեծամասնությունը՝ 74%:

Գրաֆիկ 3

Հեղուկ վառելիքի համաշխարհային սպառումը՝ ըստ տարածաշրջանների, օրական մլն բարել



Աղբյուրը՝ ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտ. «Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.»

Ի տարբերություն հեղուկ վառելիքի, վերականգնվող էներգետիկան ու ածուխը համաշխարհային էներգետիկայի ամենաարագ աճող աղբյուրներն են, որոնց սպառումը նշված ժամանակահատվածում կաճի համա-

[1] Զեկույցում հեղուկ վառելիքի սպառման ու արտադրության ցուցանիշները չափվում են նավթի բարելով:

պատասխանաբար տարեկան միջինը 2,1 և 2%-ով: Վերականգնվող էներգետիկ աղբյուրների զարգացմանը զգալիորեն կնպաստեն նավթի ու բնական գազի համաշխարհային բարձր գներն ու շրջակա միջավայրի վրա արդյունահանվող վառելիքի սպառման ածխաջրածնային արտանետումների հետ կապված խնդիրները: Մյուս կողմից, ի տարբերություն հեղուկ վառելիքի ու բնական գազի, առավել ցածր են ածխարդյունաբերության ծախսերը, ուստի ածխի հանքերով հարուստ երկրներում (Չինաստան, Հնդկաստան և Միացյալ Նահանգներ), որոնք հանդիսանում են էներգիայի խոշորագույն սպառողներ, ածխարդյունաբերության զարգացումը դառնում է տնտեսապես առավել շահութաբեր:

Վերջին մի քանի տարիներին համաշխարհային էներգիայի սպառման մեջ նկատված ածխի մասնաբաժնի կտրուկ աճը գլխավորապես պայմանավորված էր Չինաստանում ածխի սպառման տեմպերի կտրուկ աճով: Եթե 2002թ. ածխի մասնաբաժինը հաշվվում էր համաշխարհային էներգիայի սպառման 24%-ը, իսկ 2005թ.՝ 27%, ապա 2030թ. այն կկազմի շուրջ 30%: 2005-2030թթ. ԱՄՆ-ը, Չինաստանն ու Հնդկաստանը կծածկեն համաշխարհային ածխի սպառման աճի շուրջ 90%-ը: Ածխի սպառման տեմպերը, ընդհակառակը, կնվազեն մասնավորապես ՏՀԶԿ Եվրոպայի երկրներում ու Ճապոնիայում, որոնց բնակչությունը կա՛մ դանդաղ է ավելանում, կա՛մ էլ նվազում է, էլեկտրաէներգիայի պահանջարկի աճը ցածր է, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունում ածխից առավել կիրառելի են բնական գազը, միջուկային էներգիան ու վերականգնվող էներգետիկ աղբյուրները:

Համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ ըստ վառելիքատեսակների

Կանխատեսվող ժամանակաշրջանում համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրությունը զգալիորեն կաճի: Եթե 2005թ. արտադրվել էր 17,3 տրլն կվտ/ժ էլեկտրաէներգիա, ապա 2030թ. այդ ցուցանիշը գրեթե կկրկնապատկվի՝ կազմելով 33,3 տրլն կվտ/ժ: Համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության ամենամեծ աճը կարձանագրվի ՏՀԶԿ-ին չանդամակցող երկրներում, որտեղ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը, միջինացված սցենարի դեպքում, կկազմի տարեկան միջինը 4%՝ պայմանավորված այդ երկրներում կենսամակարդակի բարձրացմամբ: Ինչ վերաբերում է ՏՀԶԿ անդամ պետություններին, որտեղ բնակչության աճը համեմատաբար դանդաղ է, ապա այստեղ էլեկտրաէներգիայի արտադրու-

թյունը կունենա առավել ցածր աճման տեմպ՝ 2005-2030թթ. արձանագրելով տարեկան միջինը 1,3% աճ:

Բնական գազն ու ածուխը, որոնք ներկայում համարվում են համաշխարհային էլեկտրաէներգիայի հիմնական վառելիքային աղբյուրները, հեռանկարում նույնպես կշարունակեն պահպանել իրենց ցուցանիշները: Կանխատեսումների համաձայն, բնական գազի համաշխարհային սպառումը կաճի տարեկան միջինը 1,7%-ով՝ կազմելով 104-ից մինչև 158 տրլն խմ գազ: Բնական գազը կշարունակի մնալ համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության և արդյունաբերության կարևոր աղբյուր: Կանխատեսումների համաձայն, եթե 2005թ. բնական գազը կազմում էր համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության 20%-ը, ապա արդեն 2030թ. այն կկազմի շուրջ 25%: Արդյունաբերությունը, որը բնական գազի համաշխարհային խոշոր սպառողն է, 2030թ. սպառելու է գազի շուրջ 43%-ը: Հարկ է նշել, որ բնական գազի համաշխարհային պահանջարկի հիմնական մասը կապահովվի ի հաշիվ ՏՀԶԿ-ին չանդամակցող պետությունների աճող արտադրության, որոնք 2005-2030թթ. կապահովեն բնական գազի համաշխարհային արտադրության ընդհանուր աճի ավելի քան 90%-ը:

Ինչ վերաբերում է ածխին, ապա դրա ցուցանիշը 2005թ. 41%-ի փոխարեն կկազմի 46%: ԱՄՆ-ում և ՏՀԶԿ-ին չանդամակցող ասիական երկրներում, որտեղ ածխի պաշարները բավարար են, նավթի ու բնական գազի բարձր գների պայմաններում, ածուխը համարվում է էլեկտրաէներգիայի արտադրության տնտեսապես առավել արդյունավետ աղբյուր: Շատ երկրներում բնական գազն է համարվում էլեկտրաէներգիայի արտադրության առավել արդյունավետ վառելիք և արտադրում է ավելի քիչ ածխաթթու գազ, քան ածուխը և նավթը, ուստի համեմատաբար նախընտրելի էներգետիկ աղբյուր է:

Կանխատեսվող ժամանակահատվածում համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրությունում սպասվում է նաև միջուկային էներգետիկայի մասնաբաժնի աճ: Այսպես, եթե 2005թ. միջուկային էներգետիկայից ստացվող էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմում էր 2,6 տրլն կվտ/ժ, ապա 2015թ. այն կաճի մինչև 3 տրլն կվտ/ժ, իսկ 2030թ.՝ 3,8 տրլն կվտ/ժ: Համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրությունում միջուկային էներգետիկայի մասնաբաժնի աճին ու ոլորտի զարգացմանը նպաստում են նաև արդյունահանվող վառելիքի գների բարձրացման միտումները, էներգետիկ անվտանգության հիմնահարցերը: Մյուս կողմից, սակայն,

միջուկային էներգետիկայի զարգացմանը մեծապես կարող են խոչընդոտել դրա արտադրությունն ապահովող կայանների անվտանգությանը, ռադիոակտիվ նյութերի արտանետումներին և միջուկային զենքի չտարածմանը վերաբերող խնդիրները:

2005-2030թթ. միջուկային էներգետիկայի հզորությունները կավելանան հիմնականում ՏՀԶԿ-ին չանդամակցող պետությունների հաշվին: Ռուսաստանը, Չինաստանը և Հնդկաստանը, միասին վերցրած, կապահովեն միջուկային էներգետիկայի համաշխարհային արտադրության կանխատեսվող աճի գրեթե 2/3-ը: Միջինացված սցենարով, 2005-2030թթ. Ռուսաստանը կավելացնի իր միջուկային էներգետիկ պոտենցիալը 18 գիգավատով, Հնդկաստանը՝ 17-ով, իսկ Չինաստանի մասնաբաժինը կլինի անհամեմատ բարձր՝ 45 գիգավատ: ՏՀԶԿ անդամ որոշ պետություններ, որոնք ունեն համապատասխան միջուկային ծրագրեր, նույնպես կմեծացնեն երկրի միջուկային էներգետիկ հզորությունները: Այդ երկրներից կարելի է առանձնացնել Հարավային Կորեան, որն իր միջուկային էներգետիկ պոտենցիալը կավելացնի 14 գիգավատով, Ճապոնիան՝ 11, Կանադան՝ 6:

Փորձագիտական գնահատականների համաձայն, հիդրոէներգետիկան ու վերականգնվող այլ աղբյուրները 2005-2030թթ. կշարունակեն պահպանել աճման տեմպերը: Կանխատեսվող ժամանակահատվածում վերականգնվող վառելիքատեսակների սպառումը կաճի տարեկան միջինը 2,1%-ով: Վերականգնվող էներգետիկայի սպառման աճի մեծ մասը արձանագրվելու է ի հաշիվ ՏՀԶԿ-ին չանդամակցող ասիական, ինչպես նաև Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի երկրների հիդրոէներգետիկ հզորությունների, որտեղ մի շարք երկրներ, շահագործվող հիդրոէներգետիկ ենթակառուցվածքներից բացի, նախագծում են կառուցել նորերը (Չինաստան, Հնդկաստան, Բրազիլիա):

Կանխատեսումները հաստատում են, որ հիդրոէներգետիկայի սպառման աճ, ըստ էության, չի նախատեսվում ՏՀԶԿ անդամ երկրներում (բացի Կանադայից ու Թուրքիայից): Դրա փոխարեն, ՏՀԶԿ անդամ պետություններում վերականգնվող էներգետիկայի սպառման աճ կարձանագրվի ի հաշիվ այլ՝ քամու, արևային, երկրաջերմային և կենսազանգվածի էներգետիկ աղբյուրների:

Նավթի համաշխարհային գները

«Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.» զեկույցի միջնաժամկետ կանխատեսումների համաձայն, նավթի համաշխարհային բարձր գները կարող են որոշակի ազդեցություն ունենալ համաշխարհային էներգետիկ պահանջարկի վրա և որոշակի անորոշություն մտցնել: Կանխատեսվող ժամանակահատվածում ակնկալվում է նավթի համաշխարհային գների աճ, որը հիմնականում կդրսևորվի 2015թ. սկսած: Միջինացված սցենարով, նավթի գինը 2015թ. կկազմի մոտավորապես $70 մեկ բարելի համար, որից հետո կարձանագրվի գների կայուն աճ՝ 2030թ. կազմելով $113՝ մեկ բարելի դիմաց: Այլ է նավթի գների զարգացման դինամիկան զեկույցում առաջարկված «բարձր» սցենարի պարագայում, որի համաձայն՝ 2030թ. նավթի համաշխարհային գները շուրջ 65%-ով ավելի կլինեն, քան միջինացված սցենարի պարագայում՝ կազմելով $186՝ մեկ բարելի դիմաց: Հաշվի առնելով այն, որ նավթի բարձր գները երկարաժամկետ կտրվածքով կարող են դանդաղեցնել համաշխարհային էներգետիկ պահանջարկի աճը՝ հեղուկ վառելիքի համաշխարհային սպառման ցուցանիշը «բարձր» սցենարի դեպքում 2030թ. կկազմի օրական 99,3 մլն բարել, ինչը շուրջ 13 մլն բարելով ցածր է՝ կանխատեսվող միջինացված սցենարի համեմատությամբ:

Երկարաժամկետ տեսլականում նավթի համաշխարհային գները կսահմանվեն մի քանի գլխավոր գործոններով, որոնցից կարելի է առանձնացնել՝

- հեղուկ վառելիքի համաշխարհային պահանջարկի աճ,
- ՆԱԵԿ-ի (Նավթարտահանող երկրների կազմակերպություն) ավանդական հեղուկ վառելիքի *(conventional liquids)* ռեսուրսների արտադրության բարձր ծախսերը,
- ՆԱԵԿ-ի ներդրումային ու արտադրողական քաղաքականությունը,
- ոչ ավանդական հեղուկ վառելիքի *(unconventional liquids)* մատակարարումների արժեքն ու չափաքանակը:

Գրաֆիկ 4

Նավթի համաշխարհային անվանական գները՝ ըստ երեք սցենարների, 1980-2030թթ. (ամերիկյան դոլար՝ մեկ բարելի դիմաց)



Աղբյուրը՝ ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտ. «Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.»

Հեղուկ վառելիքի համաշխարհային արտադրությունը

Միջինացված սցենարի համաձայն, 2005-2030թթ. հեղուկ վառելիքատեսակների համաշխարհային արտադրությունը կաճի օրական 28 մլն բարելով, որը կարող է ապահովել էներգետիկ պահանջարկի կանխատեսվող աճը: Արտադրության աճ կանխատեսվում է ինչպես ՆԱԵԿ արտադրողների, այնպես էլ կազմակերպությանը չանդամակցող արտադրողների կողմից: Ընդ որում՝ հեղուկ վառելիքի համաշխարհային մատակարարումների աճի 47%-ը կարձանագրվի ՆԱԵԿ անդամ պետությունների հաշվին: 2030թ. ՆԱԵԿ-ը կարտադրի ընդհանուր առմամբ օրական մինչև 49 մլն բարել, ինչը զիջում է կազմակերպությանը չանդամակցող երկրների արտադրության ցուցանիշին՝ համապատասխանաբար օրական 63 մլն բարել:

ՆԱԵԿ երկրներ

Կանխատեսումների միջինացված սցենարով ՆԱԵԿ արտադրողները կամրապնդեն հեղուկ վառելիքի շուկայի իրենց ներկայացվածությունը և կզարգացնեն դրանց արտադրության ծավալներն այն չափաքանակով, որպեսզի արտադրվող ավանդական նավթի քանակը կազմի հեղուկ վառելիքի համաշխարհային արտադրության շուրջ 40%-ը: Կանխատեսվող ժամանակահատվածում ՆԱԵԿ անդամ երկրներում հեղուկ վառելիքի արտադրությունը կունենա տարեկան միջինը 1,3% աճ: Արդյունքում՝ 2030թ. կարտադրվի օրական 49,3 մլն բարել հեղուկ վառելիք, որի մի զգալի հատվածը՝ օրական 31,8 մլն բարել, բաժին է ընկնում Մերձավոր Արևելքին (*տե՛ս գրաֆիկ 5*):

Գրաֆիկ 5

ՆԱԵԿ ավանդական հեղուկ վառելիքի արտադրությունը՝ ըստ տարածաշրջանների, օրական մլն բարել



Աղբյուրը՝ ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտ. «Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.»

ՆԱԵԿ անդամ պետությունների շարքում հեղուկ վառելիքի արտադրության ամենամեծ աճ կանխատեսվում է Սաուդյան Արաբիայում, որը 2005թ. օրական 11,1 մլն բարելի փոխարեն 2030թ. կարտադրի 13,7 մլն բարել: ՆԱԵԿ անդամ երկրներից հեղուկ վառելիքի արտադրության ամենաարագ աճ կարձանագրվի Կատարում. տարեկան միջինը 4,3% աճ (ներառյալ 2030թ. կանխատեսվող հեղուկացված գազի*/GTL production/Gaz-to-liquids* արտադրության օրական 0,2 մլն բարել աճը): Կատարին հաջորդում է ՆԱԵԿ անդամ Անգոլան (2005-2030թթ. տարեկան միջինը 3,7% աճ): Բարձր են նաև Իրաքի հեղուկ վառելիքի արտադրության աճի տեմպերը, որոնք նշված ժամանակահատվածում կկազմեն տարեկան միջինը 3,1% (այդ ցուցանիշը պայմանավորված է նաև երկրի քաղաքական զարգացումներով և կարող է փոփոխվել վերջիններիս ազդեցության ներքո): Հեղուկ վառելիքի ընդհանուր արտադրությունում կանխատեսվում է Իրանի մասնաբաժնի սահմանափակում մինչև 2015թ.՝ պայմանավորված աշխարհաքաղաքական և այլ իրողություններով:

Ինչ վերաբերում է ոչ ավանդական հեղուկ վառելիքին, ապա միջինացված սցենարի համաձայն, 2030թ. հեղուկ վառելիքի համաշխարհային մատակարարումների 8,6%-ը կարձանագրվի ոչ ավանդական աղբյուրների հաշվին՝ ներառյալ ՆԱԵԿ անդամ պետություններից և նրան չանդամակցող երկրներից ստացվող՝ համապատասխանաբար օրական 1,6 և 8,1 մլն բարել ցուցանիշները: ՆԱԵԿ ոչ ավանդական հեղուկ վառելիքի արտադրությունը մեծ մասամբ կազմված է Վենեսուելայի Օրինոկոյի գերծանր նավթից և Կատարի հեղուկացված գազից:

ՆԱԵԿ-ին չանդամակցող երկրներ

Միջինացված սցենարով, նավթի համաշխարհային բարձր գները կնպաստեն, որպեսզի ՆԱԵԿ-ին չանդամակցող երկրները շարունակեն ներդրումներ իրականացնել ավանդական և ոչ ավանդական հեղուկ վառելիքի արտադրության զարգացման ուղղությամբ: Կազմակերպությանը չանդամակցող երկրներում հեղուկ վառելիքի արտադրությունը, ընդհանուր առմամբ, կաճի կայուն տեմպերով՝ 2005թ. 48 մլն բարելից 2030թ. օրական 63 մլն բարելի հասնելով: Ինչ վերաբերում է ՆԱԵԿ-ին չանդամակցող երկրների կողմից ոչ ավանդական հեղուկ վառելիքի արտադրության զարգացման ցուցիչներին, ապա դրանք 2015թ. արձանագրված օրական 5 մլն բարելի փոխարեն 2030թ. կարտադրեն 8 մլն բարել:

Գրաֆիկ 6

ՆԱԵԿ-ին չանդամակցող երկրների ավանդական հեղուկ վառելիքի արտադրությունը՝ ըստ տարածաշրջանների, մլն բարել օրական



Աղբյուրը՝ ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտ. «Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.»

ՆԱԵԿ-ին չանդամակցող երկրներում ավանդական հեղուկ վառելիքի արտադրության զգալի աճ կանխատեսվում է այն տարածաշրջաններում, որտեղ հայտնաբերվել է չհետազոտված ռեսուրսների բարձր պոտենցիալ: ՆԱԵԿ-ին չանդամակցող Եվրոպայի ու Եվրասիայի երկրների կողմից հեղուկ վառելիքի արտադրության ցուցանիշները կաճեն՝ 2005թ. օրական 11,9 մլն բարելից մինչև 2030թ. հասնելով 18,9 մլն բարելի: Ընդ որում՝ վերջինիս կանխատեսվող աճի զգալի մասնաբաժինը (կեսից ավելին) կծածկվի Ռուսաստանի հաշվին: Միջինացված սցենարով, Ռուսաստանը 2005-2030թթ. ՆԱԵԿ անդամ չհանդիսացող երկրների շարքում հեղուկ վառելիքի արտադրության ամենամեծ կանխատեսվող աճ ունեցող պետությունն է՝ օրական 4 մլն բարել ցուցանիշով: ՆԱԵԿ-ին չանդամակցող Եվրոպայի ու Եվրասիայի երկրներում բարձր ցուցանիշով առանձնանում է նաև Կասպյան ավազանը, որի ընդհանուր արտադրու-

թյան աճը կանխատեսվում է տարեկան միջինը 3,6% (2005-2030թթ. օրական շուրջ 3 մլն բարել)։ Ընդ որում՝ արտադրության կանխատեսվող աճի ընդհանուր արդյունքում միայն Ղազախստանի ցուցանիշը համապատասխանաբար կկազմի օրական 2,3 մլն բարել։ Ղազախստանի հեղուկ վառելիքի արտադրողականության բարձր աճը պայմանավորված է ինչպես այդ երկրի կողմից իր արտադրողական ընթացիկ պոտենցիալի զարգացմամբ, այնպես էլ դեռևս չհետազոտված հանքերի առկայությամբ։

Միջինացված սցենարի համաձայն, Ադրբեջանն ու Թուրքմենստանը նույնպես կավելացնեն հեղուկ վառելիքի իրենց արտադրությունը։ Միջնաժամկետ հեռանկարում Թուրքմենստանը կապահովի տարեկան միջինը ավելի քան 6%-ի աճ, իսկ երկարաժամկետ կտրվածքով՝ ավելի ցածր արդյունք։ Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա այն կունենա հեղուկ վառելիքի արտադրության արագ աճ. հաջորդ տասնամյակում առավելագույնը կարտադրվի օրական 1,3 մլն բարել, իսկ 2030թ. այդ ցուցանիշը կնվազի մինչև օրական 1 մլն բարել։ Ինչ վերաբերում է ՆԱԵԿ-ին չանդամակցող ասիական արտադրողներին, ապա նրանք նույնպես կավելացնեն հեղուկ վառելիքի արտադրության ծավալները՝ 2005թ. օրական 7,2 մլն բարելի փոխարեն 2030թ. 8,6 մլն բարել։ Հեռանկարում Չինաստանը կհանդիսանա Ասիա տարածաշրջանի ՆԱԵԿ-ին չանդամակցող երկրների ընդհանուր հեղուկ վառելիքի ամենախոշոր արտադրողը։ 2005թ. այդ երկիրն օրական արտադրում էր 3,7 մլն բարել, որին հաջորդում էին Հնդկաստանն ու Մալայզիան՝ 2005թ. արտադրելով համապատասխանաբար օրական 0,8 և 0,7 մլն բարել։ Ըստ կանխատեսումների՝ 2030թ. Չինաստանն ընդհանուր առմամբ կարտադրի օրական մինչև 4 մլն բարել հեղուկ վառելիք, իսկ Հնդկաստանը՝ 1,2-1,5 մլն բարել։ ԱՄՆ-ում ընդհանուր հեղուկ վառելիքի արտադրությունը 2005թ. օրական 8,2 մլն բարելից կհասնի մինչև 10,3 մլն բարելի (2022թ.), սակայն 2030թ. այն կնվազի՝ կազմելով օրական 9,8 մլն բարել։

ՆԱԵԿ-ին չանդամակցող երկրների շարքում հեղուկ վառելիքի արտադրության ամենամեծ նվազման միտում կարձանագրվի Հյուսիսային ծովում (Նորվեգիա, Մեծ Բրիտանիա, Նիդեռլանդներ և Գերմանիա)։

Նավթի համաշխարհային պաշարները

«Oil & gas» ամսագրի տվյալներով, 2008թ. հունվարի 1-ի դրությամբ նավթի ապացուցված համաշխարհային պաշարները գնահատվել են 1,332 մլրդ բարել։ Դրանց ավելի քան կեսը՝ շուրջ 56% (748 մլրդ բարել), գտնվում է Մերձավոր Արևելքում (*տե՛ս գրաֆիկ 7*)։ Վերջինիս հաջորդում են Հյուսիսային

Ամերիկան, Աֆրիկան, որտեղ նավթի ապացուցված պաշարները գնահատվել են համապատասխանաբար 211 և 115 մլրդ բարել: Նավթի ապացուցված պաշարների ամենափոքր ցուցանիշը Ասիա ու Եվրոպա մայրցամաքներինն է՝ համապատասխանաբար 34 և 14 մլրդ բարել:

Գրաֆիկ 7

Նավթի համաշխարհային ապացուցված պաշարները՝ ըստ տարածաշրջանների (2008թ. հունվարի 1), մլրդ բարել



Աղբյուրը՝ ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտ. «Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.»

2008թ. աշխարհում նավթի պաշարներով հարուստ առաջատար 20 երկրներից 11-ը ՆԱԵԿ անդամ պետություններ են, որոնք միասին վերցրած ունեն նավթի համաշխարհային ապացուցված ընդհանուր պաշարների 69%-ը (*աղյուսակ 3*): Առաջատար 20 երկրների ցուցակը գլխավորում է Սաուդյան Արաբիան, որի նավթի ապացուցված պաշարները գնահատվում են շուրջ 265 մլրդ բարել՝ կազմելով նավթի համաշխարհային ապացուցված պաշարների գրեթե 20%-ը: Սաուդյան Արաբիային հաջորդում են Կանադան (178,6 մլրդ), Իրանն (138,4) ու Քուվեյթը (101,5): 20 երկրների շարքում Ռուսաստանը զբաղեցնում է 8-րդ դիրքը՝ 60 մլրդ բարել ցուցանիշով: ԱՊՀ անդամ պետություններից ներկայացված են նաև Ղազախստանն (11-րդ դիրք) ու Ադրբեջանը (19-րդ դիրք), որոնց նավթի ապացուցված պաշարները, ըստ *«Oil & gas»* պարբերականի, 2008թ. հունվարի 1-ի դրությամբ գնահատվել են համապատասխանաբար 30 և 7 մլրդ բարել: Ադրբեջանի նավթի հայտնաբերված պաշարները կազմում են նավթի համաշխարհային հայտնաբերված պաշարների շուրջ 0,5%-ը:

Աղյուսակ 2

Հեղուկ վառելիքի համաշխարհային արտադրությունը, 2005-2030թթ., օրական մլն բարել՝ ըստ ՆԱԵԿ և կազմակերպությանը չանդամակցող երկրների

Աղբյուրը	2005	2010	2015	2020	2025	2030
ՆԱԵԿ						
Ավանդական նավթ	35,3	36,5	39,8	43	45,3	47,7
Գերծանր նավթ/ extra-heavy oil	0,6	0,9	0,9	1	1,1	1,3
Բիտում/bitumen[1]	0	0	0	0	0	0
Ածխի հեղուկացում	0	0	0	0	0	0
Գազի հեղուկացում	0	0	0,2	0,2	0,3	0,3
Կենսավառելիք	0	0	0	0	0	0
ՆԱԵԿ, ընդհ.	**36,1**	**37,4**	**40,9**	**44,4**	**46,7**	**49,3**
ՈՉ ՆԱԵԿ						
Ավանդական նավթ	46,5	48,2	49,6	50,9	52,5	55,1
Գերծանր նավթ	0	0	0	0	0	0,1
Բիտում	1,1	1,9	2,8	3,3	3,8	4,2
Ածխի հեղուկացում	0,1	0,2	0,3	0,5	0,7	1
Գազի հեղուկացում	0	0,1	0,1	0,1	0,1	0,1
Կենսավառելիք	0,5	1,3	1,7	2,1	2,5	2,7
ՈՉ ՆԱԵԿ, ընդհ.	**48,2**	**51,8**	**54,7**	**57**	**59,8**	**63,2**
Համաշխարհային						
Ավանդական նավթ	81,9	84,8	89,4	93,9	97,8	102,9
Գերծանր նավթ	0,6	0,9	1	1,1	1,2	1,3
Բիտում	1,1	1,9	2,8	3,3	3,8	4,2
Ածխի հեղուկացում	0,1	0,2	0,3	0,5	0,7	1
Գազի հեղուկացում	0	0,1	0,2	0,3	0,3	0,3
Կենսավառելիք	0,5	1,3	1,7	2,1	2,5	2,7
Համաշխարհ. ընդհ.	**84,3**	**89,2**	**95,7**	**101,3**	**106,5**	**112,5**

Աղբյուրը՝ ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտ. «Միջազգային էներգետիկայի հեռանկարները-2008թ.»

[1] Բիտումը կարծր և ձյութանման արտադրանք է։

Աղյուսակ 3

Նավթի համաշխարհային ապացուցված պաշարները՝
ըստ 20 առաջատար երկրների (2008թ. հունվարի 1), մլրդ բարել

Երկիր	Նավթի պաշարներ	Մասնաբաժինը, %
Սաուդյան Արաբիա	264,3	19,8
Կանադա	178,6	13,4
Իրան	138,4	10,3
Իրաք	115,0	8,6
Քուվեյթ	101,5	7,6
Միացյալ Արաբ. Էմիրություններ	97,8	7,3
Վենեսուելա	87	6,5
Ռուսաստան	60	4,5
Լիբիա	41,5	3,1
Նիգերիա	36,2	2,7
Ղազախստան	30	2,2
ԱՄՆ	21	1,5
Չինաստան	16	1,2
Կատար	15,2	1,1
Ալժիր	12,2	0,9
Բրազիլիա	12,2	0,9
Մեքսիկա	11,7	0,8
Անգոլա	9,0	0,6
Ադրբեջան[1]	7,0	0,5
Նորվեգիա	6,9	0,5
Աշխարհի մնացյալ հատվածը	70,3	5,2
Համաշխարհային, ընդհանուր	**1,331.7**	**1,331.7**

Աղբյուրը՝ «Oil & Gas journal», Vol. 105, No. 48, December 2007.

[1] Ադրբեջանի պաշտոնական տվյալներով՝ 2007թ. երկրում արդյունահանվել է օրական 868 հազ. բարել, ինչը 31,7%-ով գերազանցում էր նախորդ՝ 2006թ. համապատասխան ցուցանիշը: Կրկին երկրի պաշտոնական հաղորդագրության համաձայն, 2007թ. արձանագրված նավթի արդյունահանման տեմպերի պահպանման դեպքում Ադրբեջանի նավթի պաշարները կբավարարեն 21 տարի:

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմեն Մանվելյան

Էներգետիկ անվտանգության խնդիրը բոլոր պետությունների ազգային անվտանգության կարևոր բաղկացուցիչն է դարձել: Գաղտնիք չէ, որ առանց էներգետիկ անվտանգության խնդրի լուծման՝ անհնար է խոսել ազգային անվտանգության լիարժեքության մասին: Էներգետիկ անվտանգությունը ցանկացած երկրի տնտեսության զարգացման, քաղաքական համակարգի և սոցիալական ապահովության կարևոր բաղկացուցիչն է, ինչպես նաև երկրի կայունության պահպանման գլխավոր պայմաններից մեկը: Այսպիսով, հստակ է, որ էներգետիկ անվտանգությունը ցանկացած երկրի ազգային անվտանգության կարևոր բաղկացուցիչն է, և առանց այդ հարցի լուծման անհնար է խոսել երկրի զարգացման հեռանկարի ու նրա ապագայի մասին: Հետևաբար, հարցը ոչ միայն առանձին երկրների, այլև միջազգային մի շարք կառույցների, մասնավորապես՝ Մեծ ութնյակի կամ ՆԱՏՕ քննարկումների ուշադրության կենտրոնում է: Այս հարցերի գիտական հետազոտման համար, օրինակ, ՆԱՏՕ-ն ստեղծել է հատուկ կենտրոն՝ *The Institute for the Analysis of Global Security (IAGS)*[1], որը զբաղվում է էներգետիկ անվտանգության խնդիրների ուսումնասիրությամբ:

Խոսելով էներգետիկ անվտանգության և հարցի գլոբալացման մասին՝ պետք է նկատենք, որ էներգետիկ անվտանգությունն էներգակիրներ ներմուծող և էներգակիրներ արտահանող երկրների համար տարբեր բնույթ է կրում: Կա այն սխալ կարծիքը, թե էներգետիկ անվտանգությունը միայն ներկրող երկրների խնդիրն է, իրականում այն հավասարապես (եթե ոչ ավելի) կարևոր է նաև արտահանող երկրների համար, և ֆինանսական այս ճգնաժամը մեկ անգամ ևս ապացուցում է, թե որքան խոցելի են էներգակիրներ արտահանող երկրները և որքան կարևոր է էներգիայի համաշխարհային շուկայում կայունության հաստատման խնդիրը թե՛ արտահանողների և թե՛ ներմուծողների համար: Սա է պատճառը, որ միմյանց վրա ճնշում գործադրելու համար արտահանող երկրները փորձում են կրճատել

[1] www.iags.org/es.html

արտահանման ծավալները, իսկ ներմուծողները՝ մեկ երկրից ներկրումների ծավալները: Ներմուծող երկրները արտահանողների վրա ճնշում գործադրելու համար առաջին հերթին սահմանափակում են ներդրումներն այդ երկրների էներգետիկ ոլորտներում: Օրինակ, 1996թ. ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց «Իրան-Լիբիա պատժամիջոցների ակտ» *(Iran-Libya Sanctions Act (ILSA)*[1] կոչվող օրենքի բանաձևը, որով սահմանափակվում էր այդ երկրներում արտասահմանյան ընկերությունների ներդրումների հնարավորությունը և պատժամիջոցներ էին սահմանվում բոլոր նրանց հանդեպ, ովքեր կփորձեն խախտել այս օրենքը: Օրենքում հատուկ նշվում էր, որ Իրանի էներգետիկայի բնագավառում 20 մլն դոլարից ավելի ներդրումներ կատարող ընկերությունների և արտասահմանյան բանկերի դեմ կկիրառվեն խիստ պատժամիջոցներ: Իսկ ամերիկյան ընկերություններին ընդհանրապես արգելվում էր ներդրում կատարել Իրանի տնտեսության ցանկացած բնագավառում:

Ներմուծող երկրների անվտանգության որոշ առանձնահատկություններ

Գաղտնիք չէ, որ էներգակիրներ ներմուծող երկրների համար էներգետիկ անվտանգություն ասվածը ներմուծման աղբյուրների բազմազանությունն է և կայունությունը: Այսինքն՝ ներմուծող երկիրը, ինչպիսին է Հայաստանը, անում է հնարավոր ամեն բան՝ թուլացնելու համար կախվածությունն այլ երկրից և փորձում է դիվերսիֆիկացնել ներմուծման աղբյուրները: Այսինքն՝ այն երկիրը, որը էներգակիրների ներմուծման շատ աղբյուրներ ունի, հնարավորություն ունի ավելի ակտիվ և վստահ քաղաքականություն վարել, քանի որ «էներգետիկ մահակի» վտանգը, թե մի օր արտահանող երկիրը, ինչ-ինչ քաղաքական պահանջներից դրդված, այն կօգտագործի իր դեմ, նրան չի սպառնում կամ ավելի թույլ կազդի նրա վրա: Սրանով է բացատրվում, որ էներգետիկ ներմուծող երկրները, լինի Հայաստանը, ԱՄՆ-ը, Եվրամիությունը, թե Չինաստանը, փորձում են հնարավորինս նվազեցնել իրենց տնտեսության մեջ այս կամ այն երկրի էներգետիկ չափաբաժինը և հնարավորություն են տալիս նոր երկրների մուտքն իրենց էներգետիկ շուկաներ՝ կրճատելով կախվածությունն էներգետիկ մեկ աղբյուրից: Օրինակ, 1973թ. հայտնի էմբարգոյից հետո ԱՄՆ-ը լրջորեն վերանայեց իր էներգետիկ ներմուծումների խնդիրը, և այսօր նրա շուկայում Սաուդյան

[1] Ian Bremmer, *Oil Politics: America and the Riches of the Caspian Basin,* World Policy Journal, vol 15, no. 1, Spring 1998. Ian Bremmer Oil Politics: America and the Riches of the Caspian Basin.

Արաբիայի նավթն ընդամենը 9% է կազմում: Ըստ արևմտյան շատ մասնագետների, ներմուծող երկրների համար էներգետիկ անվտանգության լավագույն պայմանն այդ շուկայի ազատականացումն է[1]: Այսինքն՝ երբ էներգետիկ հումքը հնարավոր լինի ձեռք բերել միջազգային սակարաններից և երբ մեկ կամ մի քանի երկրներ չեն կարողանա ուղղակի ազդել այս կամ այն էներգատեսակի գնի ձևավորման վրա: Օրինակ, եթե նավթի գինը ձևավորվում է հենց այս եղանակով, այսինքն՝ սակարաններում (իհարկե, նավթի գնի ձևավորման մեխանիզմը բավական բարդ է, ինչին հետագայում կարելի է ավելի մանրամասն անդրադառնալ), ապա գազի մասին նույնը չես ասի: Այսօր գազի շուկա՝ որպես այդպիսին, գոյություն չունի, հետևաբար արտահանող երկրներն են որոշում նրա գինը՝ այդպիսով ազդելով այն երկրների էներգետիկ վիճակի վրա, ուր այն ներմուծվում է: Այսպես, օրինակ, Հայաստանը նավթամթերքների ներմուծման հարցում խնդիր չունի (այստեղ, իհարկե, բացառություն է կազմում միայն Վրաստանով նավթի ներմուծման հարցը, որը գնագոյացման քաղաքականության վրա որոշակի ազդեցություն է թողնում), քանի որ այն գնվում է միջազգային շուկայի գներով, և մեր երկրի ողջ տնտեսությունն ի վիճակի է աշխատել այդ գներով: Դա պարզորոշ երևաց հատկապես գների աննախադեպ բարձրացման ժամանակ: Սակայն նույնը չես ասի մեր գազի շուկայի մասին, քանզի գնային քաղաքականության առումով Հայաստանը լուրջ կախվածություն ունի ռուսական գազից, հետևաբար նաև մեր տնտեսությունը շարունակում է լուրջ կախվածության մեջ մնալ այդ երկրից: Եվ թող պարադոքսալ չհնչի, սակայն Ռուսաստանը որքան բարձրացնում է գազի գինը, այնքան մեր էներգետիկ անվտանգության համակարգն ավելի կայուն է դառնում, և երբ գազի գինը հասնի միջին եվրոպականի, կարող ենք հայտարարել, որ էներգետիկ անվտանգության առումով Հայաստանը լուրջ հաջողության է հասել:

Էներգետիկ վտանգի հարցը արտահանող երկրների համար

Էներգետիկ անվտանգության առումով արտահանող երկրները բախվում են այլ տիպի խնդիրների, որոնք ազդում են ոչ միայն այդ երկրների տնտեսական, այլև քաղաքական համակարգերի վրա: Ըստ շատ փորձագիտական կենտրոնների, առաջիկա տասնամյակներում նավթը և գազը շարունակելու են մնալ էներգիայի հիմնական աղբյուր, և, հետևաբար, այդ պա-

[1] *К.Робинсон, Э.Маршалл,* Энергетическая безопасность: Энергетическая небезопасность 17.07.2006, №129 (1656) http://www.vedomosti.ru/newspaper/article.shtml?2006/07/ 17/109605

շարներով հարուստ երկրները, առաջվա նման, կշարունակեն մնալ մեծ տերությունների ուշադրության կենտրոնում՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: Օրինակ, դեռ անցած դարի 90-ականների կեսերին ամերիկյան նավթային հսկա *Unocal* ընկերության գլխավորությամբ ստեղծվեց լոբբիստական կառույց, որում ընդգրկվեցին Ջորջ Բուշ-ավագի և Ջիմի Քարթերի ժամանակաշրջանի հայտնի քաղաքական գործիչներ՝ նախկին պետքարտուղարներ Լոուրենս Իգլբերգերը և Հենրի Քիսինջերը, ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական Զբիգնև Բժեզինսկին, նախկին սենատոր Հովարդ Բեյքերը, ԱՄՆ բանակի գլխավոր շտաբի նախկին ղեկավար Ջոն Սունունը և պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Ռիչարդ Արմիթեջը[1]: Նման հեղինակավոր և ազդեցիկ քաղաքական գործիչները հավաքվել էին՝ առաջ մղելու Հարավային Կովկասում, Կասպից ծովի ավազանում և Կենտրոնական Ասիայում ամերիկյան նավթային ընկերությունների և ԱՄՆ քաղաքական շահերը: Նմանատիպ հետաքրքրությունը նավթով հարուստ տարածաշրջանի նկատմամբ միշտ չէ, որ դրական հետևանք է ունենում: Ըստ շատ քաղաքական վերլուծաբանների, տերությունների քաղաքական շահերի և էներգիայով հարուստ երկրների քաղաքական վարչակազմերի միջև «փոխըմբռնման» դեպքում, որպես կանոն, այդ երկրներում հաստատվում են բռնատիրական համակարգեր:

Էներգակիրներով հարուստ երկրները ժամանակի ընթացքում հայտնվում են նաև լուրջ կախվածության մեջ տնտեսության միակ ոլորտից՝ նավթի կամ գազի արդյունահանումից, ինչը բացասաբար է ազդում այդ երկրների տնտեսության մյուս ճյուղերի վրա, այսինքն՝ տեղի է ունենում միաձև տնտեսության զարգացում, ինչն այդ երկրի գոյությունը և բարգավաճումը կապում է տնտեսության միայն մեկ սեգմենտի հետ: Օրինակ, Ադրբեջանի տնտեսության և ընդհանրապես այդ պետության կախվածությունը նավթային սեգմենտից վաղուց արդեն դարձել է կրիտիկական: Ամենահամեստ հաշվարկներով՝ այդ երկրի պետական բյուջեի 50 տոկոսը հավաքագրվում է ընդամենը նավթային երկու՝ Պետական նավթային և Ադրբեջանի միջազգային օպերացիոն ընկերությունների վճարներից: Այս ընկերությունները միասին մուծում են նաև պետական հարկերի 75%-ը[2]: Ըստ շատ տնտեսագետների, նավթի գնի բարձրացման և նավթարդյունա-

[1] *Ա.Рашид*, Талибан: Ислам, нефть, и новая Большая игра в Центральной Азии. Часть 2-я 08.01.2005 http://centrasia.org/newsA.php4?st=1105151280

[2] *ИА REGNUM,* В 2007 году в бюджет Азербайджана от нефти поступит 3,059 млрд. долларов, www.regnum.ru/news/780393.html 09.02.2007

հանման աճի շրջանում այդ երկրների ու այդ թվում Ադրբեջանի տնտեսություններում առկա են, այսպես կոչված, հոլանդական հիվանդության բոլոր ախտանիշերը, որի հաղթահարումը, ըստ արևմտյան փորձագետների, դժվար է նաև այն պատճառով, որ Ադրբեջանում նավթային «բումը» կարճ կտևի և կավարտվի 2012-15թթ., որին կհետևի տնտեսական լուրջ ճգնաժամ: Բացի այդ, երկրի ողջ տնտեսության կախվածությունը նավթի գներից և մի քանի ընկերություններից Ադրբեջանը դարձնում է խոցելի ոչ միայն տնտեսապես, այլև քաղաքականապես: Այս թեզն ամբողջովին ապացուցվեց նավթի գների անկման շրջանում: Ադրբեջանն այսօր արդեն լուրջ խնդիրներ ունի իր բյուջեի կատարման և մեծ ծրագրերի իրականացման գործում: Էներգակիրներով հարուստ երկրները նաև հայտնվում են անդրազգային հզոր ընկերություններից լուրջ կախվածության մեջ, քանի որ նրանց մուծած գումարների միջոցով են միայն պահվում այդ երկրների վարչակազմերը: Օրինակ, տարածաշրջանի երկրները՝ թե՛ Ղազախստանը, թե՛ Թուրքմենստանը, թե՛ Ադրբեջանը լուրջ կախվածություն ունեն այն ընկերություններից, որոնք ֆինանսավորում և արտահանում են արդյունահանվող էներգակիրները: Դա հատկապես ցայտուն երևում է Թուրքմենստանի օրինակով, որն իր գազը վաճառում է միայն «Գազպրոմին», և, հետևաբար, ընկերությունը դառնում է ոչ միայն այդ երկրի հիմնական ֆինանսավորողը, այլև լուրջ քաղաքական լծակներ է ձեռք բերում: Նույն վիճակում է հայտնվել նաև Ադրբեջանը, որի կախվածությունն անգլո-բրիտանական «Բրիթիշ Փեթրոլիում» և նորվեգական «Սթաթոյլ» ու միջազգային այլ գերհզոր նավթային ընկերություններից դարձել է կրիտիկական: Այս ընկերություններն ուղղակիորեն կամ վերահսկողության տակ գտնվող կոնսորցիումների միջոցով իրենց ձեռքերում են կենտրոնացրել Ադրբեջանի նավթային սեկտորի ճնշող մասը: Նրանք ոչ միայն վերահսկում են այդ երկրի ամենաեկամտաբեր նավթահորերը, այլև հսկողության տակ են վերցրել Ադրբեջանից նավթի առաքման հիմնական խողովակաշարերը՝ Բաքու-Սուփսան և Բաքու-Ջեյհանը: Օրինակ, 2007թ. առաջին 6 ամիսների ընթացքում Ադրբեջանից արտահանվել է 8,66 մլրդ դոլարի նավթ և նավթամթերք: Արտահանվող նավթի առյուծի բաժինն ընկնում է Ադրբեջանական միջազգային օպերացիոն ընկերությանը (ԱՄՕԸ): Վերջինս արտահանել է 7,7 մլրդ դոլարի նավթ և նավթամթերք: Այս արտահանումից Ադրբեջանի ուղղակի եկամուտը կազմել է 1,2 մլրդ դոլար, այն դեպքում, երբ ընկերության արտասահմանյան բաժնետերերին հասել է 6,5 մլրդ դոլարի

եկամուտ[1]: ԱՄՕԸ կոնսորցիումի հիմնական բաժնետերերը միջազգային 10 խոշոր նավթային ընկերություններն են, որոնցից ամենամեծ փայատերերն են *British Petroleum-ը (BP),* որն ունի բաժնետոմսերի 34,1%-ը, *Unocal-ը* ՝ 10,3%, *Statoil-ը* ՝ 8,6%, *ExxonMobil-ը* ՝ 8%[2] և այլն: Ասենք, որ ԱՄՕԸ ընկերությունը տնօրինում է նաև Ադրբեջանի նավթի ամենաեկամտաբեր հանքավայրը՝ Չիրաք-Գյունեշլին: Նշենք նաև, որ «Բրիթիշ Փեթրոլիումը» վերահսկում է Բաքու-Ջեյհան նավթամուղը: Բրիտանական այդ ընկերությունը Բաքու-Ջեյհանի հիմնական օպերատորն է, և նրան է պատկանում բաժնետոմսերի 30,1%-ը[3]:

Նույն վիճակն է տիրում նաև Ադրբեջանի ամենահեռանկարային համարվող գազի միակ հանքավայրում՝ Շահդենիզում: Այս հանքավայրը շահագործում է «Շահդենիզ հանքավայրի պայմանագիր» ընկերությունը, որի մասնաբաժնի հիմնական անդամներն են «Բրիթիշ Փեթրոլիումը»՝ 25,5%, վերջինս նաև այս համաձայնագրի օպերատորն է, «Սթաթոյլը»՝ 25,5%, իսկ Ադրբեջանի նավթային պետական ընկերությունն ունի ընդամենը բաժնետոմսերի 10%-ը[4]:

Ադրբեջանական նավթը միջազգային շուկա դուրս բերելու համար կառուցվել է Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը: Այս գազամուղը շահագործում է «Հարավկովկասյան խողովակաշար» ընկերությունը, որի հիմնական բաժնետերը նույնպես բրիտանական «Բրիթիշ Փեթրոլիումն» է, որը նաև պատասխանատու է այս խողովակաշարի կառուցման և շահագործման համար: Նշենք, որ «Բրիթիշ Փեթրոլիումը» վերահսկում է այս ընկերության ակտիվների 25,5%-ը, նախագծի երկրորդ օպերատորը՝ նորվեգական «Սթաթոյլը», որը պատասխանատու է ծրագրի առնտրային կողմի համար, նույնպես վերահսկում է ակտիվների 25,5%-ը, իսկ Ադրբեջանի նավթային պետական ընկերությանը պատկանում է այս խողովակաշարի մասնաբաժնի միայն 10%-ը[5]: Այսպիսով, բրիտանական «Բրիթիշ Փեթրոլիումը» և նորվեգական «Սթաթոյլը» վերահսկում են ոչ միայն Շահդենիզի հանքավայրը, այլև այն խողովակաշարը, որով ադրբեջանական գազը

[1] *ИА REGNUM «Новости»: За полугодие Азербайджан экспортировал нефти и нефтепродуктов на 8,66 млрд долл.* www.regnum.ru/news/887181.html. 19.09.2007

[2] *Муталибов А.,* «Черное золото» так и не превратилось в «нефтедолларовый дождь», журнал «Мировая энергетическая политика», 14 мая 2002 http://www.opec.ru/expert.asp?ex_no=57

[3] *Эмин Махмудов, Михаил Зыгарь,* «КоммерсантЪ», С горючим революционным приветом. Каспийская нефть заполняет трубопровод Баку–Джейхан, 2005г.

[4] *ИА REGNUM «Новости»:* BP и "Статойл" объявили о начале добычи коммерческого газа на "Шахдениз" (Азербайджан), www.regnum.ru/news

[5] *ИА REGNUM «Новости»:* BP и "Статойл" объявили о начале добычи коммерческого газа на "Шахдениз" (Азербайджан), www.regnum.ru/news

պետք է հոսի դեպի Թուրքիա ու Եվրոպա: Տնտեսության այդ ճյուղն աշխատատար չէ, և այն չի ապահովում մեծ թվով աշխատատեղեր: Օրինակ, Ադրբեջանում, որտեղ ներքին համախառն արդյունքում էներգետիկ սեկտորը 54%-ից ավելի է, զբաղված է աշխատունակ բնակչության միայն 1%-ը:

Այսպիսով, էներգակիրներով հարուստ երկրներում անդրազգային ընկերությունների ազդեցության աճը և այդ երկրների կախվածությունը տնտեսության մեկ սեգմենտից այդ երկրները դարձնում է խոցելի, իսկ նրանց կառավարման համակարգը՝ ոչ լիարժեք: Հարվածի տակ է հայտնվում այդ երկրների տնտեսության ոչնավթային սեկտորը: Բացի այդ, նավթի և գազի ոլորտները բավական ֆինանսատար են, ինչն այդ երկրներին հավերժ կախվածության մեջ է գցում միջազգային ֆինանսական կազմակերպություններից և գերտերություններից:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՓՈ՞Ի

Մերգեյ Մինասյան

1993 թվականից Թուրքիան, կապված Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ակտիվացման հետ, փակել է սահմանը Հայաստանի հետ: Այդ ժամանակվանից ի վեր երկու պետությունների միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ չկան, տնտեսական և առևտրային համագործակցությունն իրականացվում է երրորդ երկրների միջոցով: Մինչև վերջերս Թուրքիան, իբրև Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման նախապայմաններ, առաջ էր քաշում մի շարք պահանջներ՝ կապված Ղարաբաղյան հակամարտության, ինչպես նաև հայ սփյուռքի կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի հետ:

Միևնույն ժամանակ, հարաբերությունների նորմալացման համար առաջադրվող վերոնշյալ նախապայմանները, բացի ցեղասպանության ճանաչման հիմնախնդրից, որն Անկարայի համար ամենասուր ու զգայուն խնդիրն է հայ-թուրքական հարաբերությունների ընդհանուր ամբողջության մեջ, իրականում այն հարցերը չէին, որ գերակայական էին Թուրքիայի և թուրքական հասարակության համար: Կարելի է նույնիսկ պնդել, որ Թուրքիան արևելյան հարևանի հետ շարունակվող լիարժեք հարաբերությունների բացակայությամբ ու փակ սահմաններով իր տարածաշրջանային քաղաքականությունը Հայաստանի (և ընդհանրապես ողջ Հարավային Կովկասի) նկատմամբ կախման մեջ է դրել երրորդ երկրի՝ Ադրբեջանի դիրքորոշումներից:

Իր հերթին, Հայաստանի քաղաքական էլիտայի կողմից մոտավորապես 1990-ական թթ. վերջերից ձևավորվեց և կիրառման մեջ դրվեց ցեղասպանության գործոնի՝ որպես «ոչկոնվենցիոնալ զենքի», սահմանների բացման և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման համար ճնշման ռեսուրսի օգտագործման մի ինչ-որ հայեցակարգ: Հաշվի առնելով Անկարայի վրա Երևանի ազդեցության հնարավորությունների սահմանա-

փակությունը՝ Հայաստանը փորձում էր ցեղասպանության թեմատիկայի հանդեպ Թուրքիայի առանձնահատուկ զգայականության գործոնն օգտագործել որպես հարաբերությունների նորմալացումը խթանող միջոց։

Այնուամենայնիվ, գրեթե 15-ամյա այդ ողջ շրջանում (1993-2008թթ.) հայ-թուրքական հարաբերությունների մի ինչ-որ կոնստանտ էր պահպանվում. Թուրքիան փակ էր պահում հայ-թուրքական սահմանը և փաստորեն իրականացնում էր Հայաստանի հաղորդակցային «կիսաշրջափակումը» (ջանալով տնտեսական ճնշման միջոցով Երևանին հարկադրել զիջումների գնալ ցեղասպանության և Ղարաբաղյան հակամարտության հարցում), իսկ Հայաստանը փորձում էր ցեղասպանության գործոնը և Անկարայի վրա Բրյուսելի ու Վաշինգտոնի անուղղակի ազդեցության հնարավորությունն օգտագործել՝ Թուրքիային հարկադրելու համար փոխել դիրքորոշումը և բացել սահմանը։ Միակ կարևոր բացառությունն այս շարքում, հավանաբար, կարելի է համարել Հաշտեցման թուրք-հայկական հանձնաժողովի *(TARC)* աշխատանքի շրջանը 2001-2004թթ., երբ, համենայնդեպս փորձագիտական մակարդակով, Թուրքիայում սկսեցին խոսել շուտով սահմանը բացելու և Հայաստանի հետ հարաբերությունները նորմալացնելու ցանկալիության մասին։ Հարկ է նշել նաև, որ այդ հարաբերությունների վրա այս կամ այն չափով ազդում էին նաև ընդհանուր տարածաշրջանային գործընթացների արդյունքները. ԱՄՆ ներխուժումը Իրաք 2003թ. և Թուրքիայի՝ ամերիկյան զորքերին իր տարածքով Հյուսիսային Իրաք մտնելը չթույլատրելով պայմանավորված՝ Անկարայի և Վաշինգտոնի հարաբերությունների կտրուկ վատթարացումը, ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության շուրջ Անկարայի և Բրյուսելի բանակցությունների դինամիկան, ռուս-թուրքական մերձեցումը և այլն։

Այսպիսին էր հայ-թուրքական հարաբերությունների ընդհանուր տարածաշրջանային համապատկերը 2008թ. սկզբի դրությամբ, երբ կտրուկ շրջադարձ նկատվեց, ինչն առաջ էր եկել ինչպես ներքին պատճառներով ու երկու երկրների ղեկավարների քաղաքական կամքի դրսևորմամբ, այնպես էլ աշխարհաքաղաքական համատեքստի փոփոխությամբ թե՛ Հարավային Կովկասում, թե՛ ավելի լայն տարածաշրջանային ընդգրկմամբ։

2008թ. փետրվարին Հայաստանում նախագահական ընտրություններ տեղի ունեցան, փոխվեց երկրի ղեկավարությունը։ Նորընտիր նախագահ Ս.Սարգսյանն առաջիններից մեկը ստացավ հենց իր թուրք գործընկեր Ա.Գյուլի և վարչապետ Ռ.Թ.Էրդողանի շնորհավորանքները։ Ղեկավարու-

թյան փոփոխությունը Հայաստանում և Թուրքիայի որոշ փորձագիտական շրջանակներում հնչող կարծիքները Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման քաղաքական անհեռանկարայնության մասին՝ նախադրյալներ էին ստեղծում երկկողմ հարաբերությունների նորմալացմանն ուղղված ջանքերի նոր փուլ սկսելու համար: Թեև, իհարկե, «մաքուր էջից» սկսել Երևանն ու Անկարան չկարողացան. պատմական բեռն ու հիմնախնդրի բարդությունը երկու երկրների համար էլ, միակողմանի գործողությունների առկա իներցիան և խոր անվստահությունն իրենցն ասում էին:

2008թ. մայիսին Մոսկվայում, Ռուսաստանի հայ սփյուռքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, նախագահ Ս.Սարգսյանը հրապարակավ հայտարարեց, որ նախագահ Ա.Գյուլին հրավիրել է Երևան՝ սեպտեմբերի 6-ին միասին դիտելու Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի հավաքականների խաղը: Շատ փորձագետների կարծիքով՝ Թուրքիայի նախագահի՝ Երևան այցելության հրավերը պատահականորեն չի հնչեցվել հենց Մոսկվայում. այդ փաստն ինքնին խորհրդանշում էր Ռուսաստանի քաղաքականության փոփոխությունը կամ գոնե ճշգրտումը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում: Հավանաբար, հայկական ղեկավարությանը հաջողվել է համոզել Կրեմլին, որ Երևանի և Անկարայի հարաբերությունների կարգավորումը տեղի չի ունենա ի հաշիվ հայ-ռուսական ռազմաքաղաքական հարաբերությունների: Առաջին անգամ Ռուսաստանը ոչ միայն խոչընդոտներ չհարուցեց հայ-թուրքական երկխոսության ճանապարհին, այլ նաև ինքը փորձեց աջակցել դրան: Ինչպես վկայում է մամուլը, 2008թ. հունիսին Ռուսաստանի ԱԳՆ ղեկավար Ս.Լավրովի Թուրքիա այցի ընթացքում (Ա.Գյուլին Ս.Սարգսյանի մոսկովյան հրավերից շատ չանցած) ռուս նախարարը թուրքական ղեկավարության հետ ի թիվս այլոց քննարկում էր նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցերը:

2008թ. օգոստոսի 8-ին Ռուսաստանի և Վրաստանի միջև սկսված «Հնգօրյա պատերազմը» փոխեց տարածաշրջանային ողջ համատեքստը և Հարավային Կովկասում նոր քաղաքական իրականություն, նոր ստատուս-քվո ստեղծեց: Թուրքիան փորձեց «իր խաղն» սկսել նաև ճգնաժամի ընթացքում, հաստատել իր նոր տեղը կովկասյան տարածաշրջանային քաղաքականությունում: Դա, մասնավորապես, դրսևորվեց նրանով, որ Անկարան սկզբում արգելեց, որ ամերիկյան նավերը սևծովյան նեղուցներով հասնեն Վրաստանի ափերին: Թուրքիայի փոփոխված քաղաքական գերակայությունները

դրսևորվեցին նաև Հարավկովկասյան տարածաշրջանի նկատմամբ նրա առաջադրած (Մոսկվայի համաձայնությամբ) նոր քաղաքական նախաձեռնությամբ, այսպես կոչված՝ «Կայունության կովկասյան պլատֆորմով»:

Օգոստոսյան ճգնաժամի ու նոր ստատուս-քվոյի արդյունքներն անդրադարձան նաև հայ-թուրքական հարաբերությունների ընդհանուր համապատկերի վրա՝ արագացնելով դրանց ընդհանուր դինամիկան և նոր նախադրյալներ ստեղծելով դրանց նորմալացման համար, ինչը մինչ այդ քաղաքական գործիչներն ու փորձագետները լրջորեն նկատի չէին առնում: Օրինակ, Վրաստանի՝ այդ պատերազմի հետևանքով ի հայտ եկած հաղորդակցային ռիսկերն առաջին հերթին առաջ բերեցին Անկարայի հետաքրքրվածությունը Հայաստանի հետ սահմանի բացման և նրա տարածքը որպես Թուրքիայի համար մի ինչ-որ այլընտրանքային տրանսպորտային և անգամ էներգետիկ միջանցք օգտագործելու հնարավորության նկատմամբ: «Հնգօրյա պատերազմի» արդյունքների և Վրաստանով անցնող բոլոր հաղորդակցային ու էներգետիկ նախագծերի գործառնության ժամանակավոր դադարեցման համատեքստում մի շարք թուրք փորձագետներ և քաղաքական գործիչներ, անգամ Թուրքիայի ԱԳ նախարար Ալի Բաբաջանի մակարդակով, կարծիք հայտնեցին, թե «Հայաստանը նույնպես կարող էր Վրաստանի տարածքով (որը ռուսական ինտերվենցիայից հետո անհուսալի էր դարձել) Կասպից ծովից Արևմուտք գնացող գազատարի այլընտրանք լինել»:

Ընդհանուր առմամբ, կարելի է պնդել, որ «Հնգօրյա պատերազմը» Հարավային Օսիայում զգալիորեն ակտիվացրեց, իսկ ավելի ճիշտ՝ վերակենդանացրեց Թուրքիայի կովկասյան քաղաքականությունը: Շատ բանով հենց դրա ազդեցությամբ էլ, ինչպես կարծում են շատ փորձագետներ, Անկարայում վերջնական քաղաքական որոշում ընդունվեց 2008թ. սեպտեմբերի 6-ին Թուրքիայի նախագահ Ա.Գյուլի Երևան աննախադեպ այցելության մասին: Հընթացս, 2008թ. օգոստոս-սեպտեմբերյան իրադարձությունների ընթացքում կրկին հաստատվեց, որ հայ-թուրքական հարաբերությունների ընդհանուր ձևաչափում ղարաբաղյան խնդիրը միայն գործիքանու նշանակություն ունի և Անկարայի քաղաքական գերակայությունների շարքում զգալիորեն զիջում է ցեղասպանության ճանաչման կամ էլ Հայաստանի հետ նորմալ հարաբերությունների հաստատման հարցի ակտուալությանը՝ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հավակնությունների համատեքստում:

2008թ. հարավկովկասյան ճգնաժամը կրկին ի ցույց դրեց աշխարհագրության պրագմատիկ նշանակությունը հայ-թուրքական հարաբերություններում, այդ թվում ելնելով նաև արևելքում Անկարայի ունեցած հաղորդակցային գերակայություններից: Դեպի Կենտրոնական Ասիա հաղորդակցություն ունենալու նպատակով հայկական երթուղին ավելի կարճ է, շահավետ, էժան, իսկ վրաց-ռուսական պատերազմից հետո՝ գուցե նաև ավելի անվտանգ Անկարայի համար:

2008թ. սեպտեմբերի 6-ին նախագահ Ա.Գյուլի՝ հայ գործընկերոջ հրավերով Երևան կատարած այցը իսկապես պատմական դարձավ և դրեց երկու երկրների հետագա քաղաքական երկխոսության հիմքերը: Դրա հետ մեկտեղ, ներկայումս կարելի է վստահաբար փաստել, որ 2009թ. առաջին կեսի տարածաշրջանային համատեքստը ևս չափազանց հարմար պահ է ստեղծում Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման համար: Առաջին անգամ Ռուսաստանը ոչ միայն չի խանգարում, այլև նույնիսկ աջակցում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, և դա ըմբռնում է գտնում Թուրքիայում: Ճիշտ է, Ռուսաստանը փորձում է դա անել ԱՄՆ տարածաշրջանային ազդեցության հաշվին, բայց հաշվի առնելով այն, որ Բ.Օբամայի ամերիկյան նոր վարչակազմում կովկասյան վեկտորն այնքան էլ գերակայական չի լինի, Անկարան բոլոր հիմքերն ունի հուսալու, որ թուրք-ռուսական երկխոսությունը Վաշինգտոնի սուր հակազդեցությունը չի առաջացնի: Իր հերթին, ԵՄ-ը միշտ ողջունել և աջակցել է հայ-թուրքական հարաբերությունների ցանկացած առաջընթաց, հատկապես՝ լիարժեք դիվանագիտական հարաբերությունների հաստատման և սահմանի բացման հարցում:

Հայ-թուրքական փոխհարաբերությունների կարևոր արդյունքներից մեկը 2008թ. հայ-թուրքական հարաբերությունների փաստացի առանձնացումն էր ղարաբաղյան պրոբլեմատիկայից և երկու երկրների՝ Ադրբեջանի հետ ունեցած փոխհարաբերություններից: Դա արդեն կարելի է որպես մի ինչ-որ եղելություն համարել, և թվում է, թե այդ փաստը ապագայում կնպաստի Հարավային Կովկասի էլ ավելի անվտանգ ու կայուն դառնալուն, քանի որ նվազեցնում է մարտական գործողությունների վերսկսման հավանականությունը Ղարաբաղյան հակամարտության գոտում: Չէ՞ որ Բաքուն արդեն Ղարաբաղյան հակամարտությունում, ռազմաքաղաքական ասպեկտներով, չի կարողանա այդպես անվերապահորեն հույսը դնել Անկարայի վրա: Մյուս կողմից՝ Հարավային Կովկասում օգոստոսյան ճգնա-

ժամի հետևանքներից մեկը՝ 2008թ. նոյեմբերի 2-ին Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահների կողմից Մոսկվայի հռչակագրի ստորագրումը, նույնպես կարելի է դիտարկել որպես Լեռնային Ղարաբաղում հակամարտող կողմերի միջև իրական փոխզիջման հասնելու առաջին փորձ: Իսկ դա արդեն Անկարային լեգիտիմ հնարավորություն է տալիս արագացնելու Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացումը՝ ելնելով այն բանից, որ սահմանները բացելով՝ Թուրքիան կնպաստի Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական բանակցությունների շարունակմանը, հաշվի առնելով Մոսկվայի հռչակագրի ու դրան հաջորդող՝ ԵԱՀԿ ԱԳՆ ղեկավարների Հելսինկյան փաստաթղթի դրույթները:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ընդունել, որ Հայաստանի հետ փակ մնացող սահմանները և Երևանի հետ շարունակվող հարաբերությունների չկարգավորվածությունը Թուրքիան խոցելի են դարձնում առաջատար համաշխարհային դերակատարների՝ ԱՄՆ-ի ու ԵՄ-ի կողմից, արտաքին ճնշման առումով: Հայ-թուրքական չկարգավորված հարաբերությունների գործոնը, ցեղասպանության ճանաչման խնդրի հետ միասին, որոշ քաղաքական ուժերի Բրյուսելում և Վաշինգտոնում հնարավորություն է տալիս Թուրքիայի հետ կապված շատ հարցերում (ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հեռանկարներից մինչև Իրաքի հյուսիսային քրդաբնակ շրջանների ապագա կարգավիճակը) դրանք որպես Անկարայի վրա ճնշում բանեցնելու լծակ օգտագործել: Մանավանդ որ Հայաստանի հաղորդակցային «խեղդման» հայեցակարգն այդպես էլ էական արդյունքների չհանգեցրեց. «կիսաշրջափակման» պայմաններում Հայաստանը շարունակում է տնտեսապես զարգանալ, թեև սահմանների բացումը Հայաստանի (ի դեպ, նաև Թուրքիայի արևելյան շրջանների) համար շատ կարևոր դրական նշանակություն կունենար:

Իր հերթին, արևելքում Հայաստանի հետ իր սահմանների բացումը Թուրքիային թույլ կտա կարևոր քաղաքական և քարոզչական դիվիդենտներ ստանալ Արևմուտքում, առաջին հերթին՝ ԵՄ-ի հետ երկխոսությունում: Հայաստանն, իր հերթին, Թուրքիայի հետ սահմանների բացման և լիարժեք երկկողմ հարաբերությունների հաստատման պարագայում կկարողանա քաղաքական ոլորտում զգալիորեն բարձրացնել իր անվտանգության մակարդակը, իսկ տնտեսական ոլորտում՝ արդյունավետորեն օգտագործել Թուրքիայի հաղորդակցային հնարավորություններն իր հետագա զարգացման համար:

Երկկողմ հարաբերությունների կարգավորման ընդհանուր արդյունք կդառնա այն, որ դրանք կլինեն էլ ավելի բաց, կձևավորվի ավելի կայուն ու անվտանգ տարածաշրջան, կակտիվանան նաև Թուրքիայի և Հայաստանի եվրաինտեգրման գործընթացները: ԶԼՄ-ում վերջին ժամանակներս հայտնվող տեղեկատվությունը Հայաստանի և Թուրքիայի միջև ակտիվորեն վարվող բանակցությունների մասին, ԱՄՆ նախագահ Բ.Օբամայի՝ 2009թ. ապրիլի սկզբի (հատկապես ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա՝ ապրիլի 24-ի նախաշեմին) Թուրքիա այցելության հետևանքները տալիս են բոլոր հիմքերը՝ հուսալու, որ նոր արմատական փոփոխություններ կլինեն երկու երկրների հարաբերություններում, ընդհուպ մինչև սահմանների բացումը և լիարժեք դիվանագիտական հարաբերությունների կարգավորումը:

ԹՈՒՐՔ-ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Արաքս Փաշայան

Վրաստանը էթնիկ և դավանական առումով բարդ խճանկար ունեցող երկիր է: Այստեղ բնակվում են թե՛ քրիստոնյա, թե՛ իսլամ փոքրամասնություններ: Մուսուլմանները բնակչության մոտ 9,9 տոկոսն են: Նրանց մեջ կան երկու հիմնական մեծ խմբեր՝ սուննիադավան էթնիկ վրացիները, որոնք բնակվում են Թուրքիային սահմանակից Աջարիայում[1] և շիադավան ադրբեջանցիները, ովքեր հավաքական ձևով ապրում են Քվեմո-Քարթլի (ադրբեջանական տարբերակով՝ Բորչալու) նահանգում, ինչը նկատի է առնում Ադրբեջանի և Հայաստանի սահմանակից Մառնեուլի, նաև Գարդաբանի, Բոլնիսի և Դմանիսի շրջանները: Մուսուլմաններ կան նաև Վրաստանի այլ շրջաններում, այդ թվում՝ Թբիլիսիում: Իսլամադավան են նաև Պանկիսի կիրճում բնակվող և վայնախյան էթնիկ խմբին պատկանող քիստերը (մոտ 12.000), որոնց շրջանում տարածված է սուֆիականությունը:

Հատկանշական է, որ Վրաստանում իսլամական էթնոդավանական փոքրամասնություններին առնչվող գործընթացները, որոնց վրա շատ դեպքերում զգալի է արտաքին դերակատարների ազդեցությունը, ժամանակ առ ժամանակ որոշակի հնչեղություն են ձեռք բերում՝ ուրվագծելով մասնավորապես թուրք-իսլամական գործոնի նշանակությունը: Այս տեսանկյունից առանձնապես կարևոր են այն գործընթացները, որոնք տեղի են ունենում ադրբեջանական երկրամասում[2]:

---

[1] Իսլամը ներկայիս Աջարիայի տարածք է ներթափանցել 16-17-րդ դարերում, երբ Օսմանյան կայսրությունը նվաճեց Վրաստանի հարավային շրջանները: Մուսուլմաններն Աջարիայի բնակչության 30 տոկոսն են:

[2] 1989թ. խորհրդային շրջանում Վրաստանում ապրում էր մոտ 307,6 հազար ադրբեջանցի: 2002թ., վերջին մարդահամարի տվյալներով, ադրբեջանցիների թիվը նվազել է մինչև 284,8 հազար: Ադրբեջանական տվյալներով՝ Վրաստանում ապրում են կես միլիոն և նույնիսկ ավելի ադրբեջանցիներ:

Վրաստանի ադրբեջանցիների խնդիրները

Վրաստանի ադրբեջանցի գործիչների համոզմամբ՝ իշխանությունները խտրական քաղաքականություն են վարում ադրբեջանական փոքրամասնության նկատմամբ: Վրաստանի ադրբեջանցիների շրջանում ձևավորվել է որոշակի դիսկուրս, ինչի արդյունքում սահմանվել են ադրբեջանական համայնքի հիմնահարցերը, որոնք գլխավորապես սոցիալ-տնտեսական և մշակութային ուղղվածություն ունեն: Ադրբեջանցի գործիչներն առանձնացնում են երեք հիմնական և անհետաձգելի խնդիրներ, որոնք կապված են հողի սեփականաշնորհման[1], ազգային կրթության և լեզվի[2] հետ: Կան նաև այլ խնդիրներ, որոնք վերաբերում են պետական պաշտոններում ադրբեջանցիների ներգրավման անհրաժեշտության, ադրբեջանական տեղանունների վրացականացման անթույլատրելիության, ադրբեջանական ազգային տարածքներում ենթակառուցվածքների զարգացման, գործազրկության կրճատման և այլևայլ իրողությունների հետ: Ադրբեջանցի գործիչների պնդմամբ՝ ի տարբերություն ինքնավարության պահանջով հանդես եկող ջավախահայերի, ադրբեջանցիների պահանջները քաղաքական բնույթ չեն կրում: Սակայն Թբիլիսիի տեսանկյունից՝ դրանք առավելապես քաղաքական ենթատեքստ ունեն:

Վրաստանի ադրբեջանցիների շրջանում հասարակական շարժումները վերջին շրջանում առավել ընդլայնվել և համակարգվել են: Դրանք շատ դեպքերում համարժեք արձագանք են գտնում միջազգային տարբեր լրատվամիջոցների կողմից: Առավել տարածված է այն տեսակետը, որ Վրաստանում իսլամական գործոնի ակտիվացումը հետաքրքրում է տարածաշրջանային մի քանի պետությունների, որոնցից են հատկապես Ռուսաստանը և

[1] Հողի խնդիրն առաջ է եկել նախագահ Է.Շևարդնաձեի օրոք իրականացված ագրարային բարեփոխումների ժամանակ, ինչի արդյունքում հիմնականում հողագործությամբ և գյուղատնտեսական ապրանքների վաճառքով զբաղվող ադրբեջանցիների մեծ մասը դուրս մնաց հողի սեփականաշնորհման գործընթացից և ներկայում ստիպված է աշխատել վարձակալած և վրացիներին պատկանող հողակտորներում: Առկա խնդրի հիմնական պատճառներից մեկն այն է, որ իշխանությունները սահմանային շրջանները համարում են կարևոր ռազմավարական վայրեր և հրաժարվում են սեփականացնել ադրբեջանցիների հողակտորները:

[2] 2005թ. Կրթության մասին օրենքի համաձայն՝ Վրաստանի բոլոր դպրոցները պետք է անցնեն վրացական ուսուցման համակարգին՝ պահպանելով ազգային լեզվի ուսուցումը, ինչը սկսեց կիրառվել 2009թ. սեպտեմբերից: Նմանօրինակ որոշումը կապված է վրացական հասարակության մեջ էթնոդավանական փոքրամասնությունների արդյունավետ ինտեգրման՝ իշխանությունների վարած քաղաքականության հետ: Այս հանգամանքը բացասաբար է դիտարկվում ադրբեջանցիների կողմից, որոնք վրացերեն չգիտեն և ձգտում են ադրբեջաներենը դարձնել տարածաշրջանային պաշտոնական լեզու:

Թուրքիան: Հատկանշական է, որ Վրաստանի ադրբեջանական փոքրամասնությանը վերաբերող խնդիրները ժամանակ առ ժամանակ քննարկվում են Ադրբեջանի հասարակական և քաղաքական տարբեր շրջանակներում:

Ադրբեջանի պարագան

Ըստ պաշտոնական տեսակետի՝ Բաքուն չի կիսում ադրբեջանցիների այն մտայնությունը, թե իշխանությունները նրանց նկատմամբ խտրական քաղաքականություն են իրականացնում, այլ ստեղծված հիմնահարցերը փորձում է բացատրել Վրաստանում առկա սոցիալ-տնտեսական խնդիրներով և ադրբեջանցիների՝ վրացերենին չտիրապետելու հանգամանքով: Բաքուն առերևույթ ի ցույց է դնում, որ չի միջամտում ադրբեջանցիների ներքին խնդիրներին և ձգտելով պահպանել ռազմավարական գործընկերությունը Թբիլիսիի հետ՝ ամեն կերպ փորձում է զսպել ադրբեջանական համայնքի գործողությունները: Ասվածի ապացույցն է մարտի 10-ին Ադրբեջանի ներքին գործերի նախարարության աշխատակիցների կողմից Վրաստանի ադրբեջանցիների ազգային ասամբլեայի նախագահ Դաշգըն Գյուլմամեդովին ձերբակալելու փաստը[1]: Մինչ այդ Գյուլմամեդովը վրացական իշխանություններից պահանջել էր դադարեցնել ազգային խտրականությունն ադրբեջանցիների նկատմամբ, ադրբեջաներենը դարձնել պետական լեզու:

Չնայած ադրբեջանցիների խնդիրների նկատմամբ Բաքվի արտաքուստ զսպված դիրքորոշմանը, իրականում պատկերը որոշակիորեն այլ է: Հենց Ադրբեջանում են գործունեության պարարտ հող գտնում Վրաստանի ադրբեջանցի ակտիվիստները: Նույն Ադրբեջանում են տեղի ունենում Վրաստանի ադրբեջանական կամ իսլամական տարաբնույթ կազմակերպությունների համագումարները: Պատահական չէ, որ 2006թ. օգոստոսին Բաքվում ստեղծվեց Վրաստանի ադրբեջանցիների միջազգային խորհուրդը՝ Ադրբեջանի մայրաքաղաքում շտաբ-բնակարանով: Ի դեպ, կառույցի նախագահ ընտրվեց թբիլիսաբնակ էթնիկ ադրբեջանցի Ֆազիլ Ալիևը[2], ով հետագայում՝ 2007թ., մասնակցեց Վրաստանի նախագահական ընտրություններին, իսկ նույն Դ.Գյուլմամեդովն ընտրվեց նախագահության անդամ[3]:

[1] В Баку арестован президент Национальной ассамблеи азербайджанцев Грузии, 11.03.2009, http://www.regnum.ru/news/1135548.html

[2] Տե՛ս *Ա.Փաշայան,* Ընտրությունները Վրաստանում. ադրբեջանական գործոն, http://www.noravank.am/am/?page=theme&thid=5&nid=992

[3] Создан Международный Совет Азербайджанцев Грузии, http://news.bakililar.az/news_sozdan_-mejdunarodnyy_sove_317.html

Մեծ թիվ են կազմում մասնավորապես ադրբեջանական լրատվամիջոցներին Վրաստանի ադրբեջանցի հասարակական-քաղաքական գործիչների տված հարցազրույցները, Ադրբեջանում նրանց մամլո ասուլիսները: 2008թ. դեկտեմբերի վերջին ադրբեջանական «Թրենդ նյուզ» լրատվական գործակալության հետ հեռախոսազրույցում Վրաստանի ադրբեջանական «Հեյրաթ» ազգային շարժման առաջնորդ Ալիբալա Ասկերովը, ամփոփելով 2008 թվականը, արձանագրել է, որ վրացական իշխանություններն ադրբեջանական խնդիրների լուծման ուղղությամբ որևէ քայլ չեն ձեռնարկել և չեն կատարել իրենց խոստումները, չի ստեղծվել էթնիկ փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող որևէ պետական մարմին[1]:

2009թ. հունվարին «Նորություններ-Ադրբեջան» լրատվական գործակալությունը տարածել է Վրաստանի ադրբեջանական կոնգրեսի նախագահ Ալի Բաբաևի այն տեսակետը, թե չնայած այն փաստին, որ օգոստոսյան պատերազմի ընթացքում ադրբեջանցիները եղել են վրացիների կողքին, նյութական օգնություն ցույց տվել փախստականներին, Թբիլիսիի համար նրանք երկրորդ կարգի մարդիկ են, ովքեր կարևորվում են միայն ընտրությունների ժամանակ[2]:

Մարտի վերջին Ադրբեջանցիների համաշխարհային կոնգրեսի փոխնախագահ և պառլամենտական Սաբիր Ռուսթամխանլին «Թրենդ նյուզին» հայտնել է, որ Վրաստանում գործում է ադրբեջանցիներին արտաքսելու գաղտնի ծրագիր, որի արդյունքում ադրբեջանական դպրոցները բռնությամբ վրացականացվում են, վերջիններիս իրավունքները ոտնահարվում են, այնպիսի պայմաններ են ստեղծվում, որ ադրբեջանցիները, ովքեր մեծ դեր են խաղացել Վրաստանի պատմության մեջ, հեռանան երկրից[3]:

Թուրքիայի պարագան

Վրաստանում թուրք-իսլամական գործոնի պահպանումը և ակտիվացումն առանձնապես հետաքրքրում է Թուրքիային, որը Սպիտակ տան հետ համաձայնեցված կերպով այլևս ներգրավվել է Վրաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ոլորտներում: Թուրքիան, որը Կովկասը համարում է իր ավանդական ազդեցության շրջանը,

[1] Azerbaijanis in Georgia complain of their unsolved problems in 2008, 30.12.08, http://news-en.trend.az/important/opinion/1384989.html

[2] Ali Babayev: Azerbaijanis, residing in Georgia, remain second-grade people in the eyes of official Tbilisi, http://www.today.az/view.php?id=50088

[3] Azerbaijanis' rights violated in Georgia: World Azerbaijanis Congress, 29.03.09, http://news-en.trend.az/society/rights/1446583.html

Վրաստանում իսլամականացմանը միտված քայլեր սկսեց ձեռնարկել դեռևս 1990-ականներից, երբ զգալի թվով թուրք քարոզիչներ Վրաստանում, մասնավորապես՝ Աջարիայում, որոշակի գործունեություն ծավալեցին: Վրաստանում սկսեց տարածում գտնել նաև թուրք աստվածաբան Ֆեթուլլահ Գյուլենի շարժումը: Հատկանշական է, որ 2006թ. հունիսի 20-ին Թուրքիայի Էրզրում քաղաքում Վրաստանի իսլամական փոքրամասնությունների մի շարք ներկայացուցիչների կողմից ստեղծվեց Վրաստանի Իսլամական դեմոկրատական կուսակցությունը: Անկախ կուսակցության հետագա ճակատագրից, ակնհայտ է, որ Թուրքիան ձգտում է աջակցել Վրաստանի մուսուլմանների կոնսոլիդացմանը[1]: Պատահական չէ, որ հենց Թուրքիան է աջակցում Վրաստանում թուրք-մեսխեթցիների հայրենադարձությունը:

Հետո թուրքական և ադրբեջանական ԶԼՄ-ում տեղեկություններ հայտնվեցին, որ Բաքուն և Անկարան պատրաստվում են ճնշումներ գործադրել Վրաստանի վրա՝ պահանջելով իրական ինքնավարություն տալ Աջարիային, Քվեմո-Քարթլին նույնպես դարձնել ինքնավարություն, կազմակերպել թուրք-մեսխեթցիների հայրենադարձությունը: Մասնավորապես՝ ադրբեջանական ԶԼՄ-ում զետեղված տեղեկությունների համաձայն՝ Ադրբեջանը նպատակ ունի քաղաքացիություն տալ Քվեմո-Քարթլիի ադրբեջանցիներին[2]: Թե՛ թուրքական, թե՛ ադրբեջանական ԶԼՄ-ում և թե՛ Վրաստանի ադրբեջանցի գործիչների կողմից հնչել է այն տեսակետը, որ Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման միակ երաշխիքը Վրաստանը դաշնության վերածելն է:

Եզրակացություններ

Վրաստանում թուրք-իսլամական գործոնի ակտիվացումը նկատի է առնում ոչ միայն էթնոքաղաքական պահանջների աշխուժացում (իսկ հեռանկարում նաև՝ անջատողական պահանջներ) իսլամական առանձին շրջանակներում, այլև՝ ժողովրդագրական աճ հօգուտ թուրքական կամ իսլամական տարրի, ինչն առավել կամրապնդվի Սամցխե-Ջավախքում թուրք-մեսխեթցիների հնարավոր վերաբնակեցման պարագայում: Զուգահեռաբար և համատեղ ձևով թուրքական տարրի ներկայացվածությունը Քվեմո-

[1] Տե՛ս *Ա.Փաշայան,* Իսլամական գործոնը Վրաստանում, http://www.noravank.am/am/?page=-theme&thid=5&nid=509

[2] Տե՛ս Турция и Азербайджан, чтобы защитить экономические интересы, используют свои меньшинства в Грузии, http://www.kavkaz-uzel.ru/articles/142570

Քարթլիում և Ջավախքում կվերացնի Թուրքիայի և Ադրբեջանի միջև առկա անջրպետը: Սա այն հարցն է, որն անմիջականորեն կապ ունի նաև Հայաստանի ազգային շահերի հետ, քանի որ նման զարգացումների դեպքում Հայաստանը բոլոր կողմերից կհայտնվի թուրքական տարրի շրջափակման մեջ:

Ցանկացած պահի թե՛ Անկարան և թե՛ Բաքուն Թբիլիսիի դեմ որպես կռվան կարող են օգտագործել հենց թուրք-իսլամական գործոնը, ինչը, օրինակ, Օսմանյան կայսրության ժառանգորդ Թուրքիայի համար առավելապես կապված է իր կովկասյան քաղաքականության հետ: Անհրաժեշտության դեպքում Ադրբեջանի իշխանություններն իրենց հերթին կարող են որոշակի քաղաքական ուղղվածություն հաղորդել ադրբեջանական շարժումներին: Այլ բան է, որ ներկա փուլում Ադրբեջանին (որը լարված հարաբերություններ ունի Հայաստանի հետ) նման գործելակերպը ձեռնտու չէ:

Չի բացառվում, որ Վրաստանում թուրք-իսլամական գործոնի ակտիվացման դեպքում Բաքուն և Անկարան գործեն համատեղ: Ի վերջո Աջարիայով և Քվեմո-Քարթլիով են անցնում թե՛ Թուրքիայի և թե՛ Ադրբեջանի համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի կոմունիկացիաներ, ինչպիսիք են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Սուփսա նավթամուղերը, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգիծը:

Հատկանշական է, որ վրացական փորձագիտական հանրությունը Վրաստանում թուրք-իսլամական գործոնի նշանակությանը գրեթե չի անդրադառնում: Չի կարևորվում նաև Վրաստանում հայկական տարրի հետ համագործակցության կարևորությունը, ինչը մեր համոզմամբ, կարող է Վրաստանի (նաև Հայաստանի) համար շահեկան լինել տարածաշրջանում թուրքական էքսպանսիան դիմագրավելու առումով:

ԿՆԵՍԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ

Արտակ Գրիգորյան

Իսրայելի ընտրական համակարգի հիմնական առանձնահատկությունն այն է, որ ընտրություններին մասնակցում են մեծ թվով կուսակցություններ: Ընդհանրապես, Իսրայելի քաղաքական դաշտն աչքի է ընկնում բազմաթիվ մանր կուսակցությունների առատությամբ: Կնեսետ մուտք գործելու համար նրանք պետք է հաղթահարեն ընդամենը 2%-անոց շեմը: Մինչև 2003թ. այդ շեմը 1,5% էր: Սա հնարավորություն է տալիս 120 հոգիանոց Կնեսետում ընդգրկվել բազմաթիվ մանր կուսակցությունների: Նման ցածր շեմը ժամանակին սահմանվել է առավել մեծ քաղաքական պլյուրալիզմ ապահովելու նպատակով: Չնայած այդ հանգամանքին, այս մոդելը ներկա պահին ունի նաև բազմաթիվ հակառակորդներ, և կուսակցությունների մի մասը հանդես է գալիս այն բարեփոխելու քաղաքական ծրագրերով: Վերջիններս շեշտում են, որ գործող մոդելի արդյունքում, որպես կանոն, ձևավորվում են թույլ կոալիցիոն կառավարություններ, որոնք շատ հաճախ կախված են լինում կոալիցիայի անդամ մանր կուսակցությունների քմահաճույքներից:

2009թ. փետրվարի 10-ին Իսրայելում կայացած Կնեսետի ընտրությունները նշանավորվեցին իշխող քաղաքական կոալիցիայի պարտությամբ:

Չնայած այն հանգամանքին, որ իշխող կենտրոնամետ *Քադիմա* կուսակցությունը հավաքեց բոլորից շատ՝ 28 մանդատ, ընտրություններն ավարտվեցին արմատական աջ ուժերի հաղթանակով: Քադիման հիմնադրվել է Արիել Շարոնի կողմից, 2005թ.: Նախագահն է Իսրայելի նախկին արտգործնախարար Ցիպորա (Ցիպի) Լիվնին: Քադիման կողմ է Պաղեստինի հետ բանակցային գործընթացներին, որի արդյունքում չի առարկում Պաղեստինի պետականության կայացմանը, իհարկե, հարկ եղած դեպքում չբացառելով նաև Իսրայելի կողմից միակողմանի կոշտ քայլերը: Կողմ է «երկու պետություն երկու ժողովուրդների համար» սկզբունքին, սահմանների վերաձևմանը և վերադարձին դեպի 1967թ. վիճակը:

Կնեսետում երկրորդ տեղը զբաղեցրեց աջ բլոկը ներկայացնող *Լիկուդ* կուսակցությունը, որը Քադիմայից ընդամենը մեկ մանդատ պակաս ստացավ: Կուսակցության նախագահն է Իսրայելի 1996-99թթ. վարչապետ Բենիամին Նեթանյահուն (Բիբի): Լիկուդը պայքարում է հանուն անբաժան Էրեց-Իսրայելի[1]: Դեմ է Պաղեստինի պետականության գոյությանը, առավել ևս՝ տարածքները վերադարձնելուն: Ըստ Լիկուդի, եթե բաժանարար գիծը պետք է տեղաշարժվի, ապա այնպես, որ Հորդանան գետի հովիտը հայտնվի Իսրայելի տարածքում: Քաղաքական իրադրությունից կախված՝ երբեմն մեղմել է իր աջակողմյան դիրքորոշումները՝ հանդես գալով ընդհուպ կենտրոնամետ դիրքերից:

Աջ արմատական *Մեր տունը Իսրայելն է* (ՄՏԻ) կուսակցությունը, որի հիմնադիրն ու անփոփոխ ղեկավարն է նախկին խորհրդային քաղաքացի, ծնունդով Քիշնևից Ավիգդոր Լիբերմանը, ստացավ 15 մանդատ՝ դառնալով 3-րդ խորհրդարանական ուժը: Վերջինիս օգտին է քվեարկել Իսրայելի ռուսալեզու բնակչության մեծ մասը: Իր քաղաքական ծրագիրը ՄՏԻ-ն կառուցել է բավական արմատական դիրքերից: Կուսակցությունը մերժում է Պաղեստինյան Ինքնավարության գոյությունը, Իսրայելի սահմանների վերաձևման հարցը, ցանկացած բանակցություն ՀԱՄԱՍ-ի կամ այլ «ահաբեկչական» կազմակերպությունների հետ, որոնց հետ հարաբերությունները բացառապես ուժի դիրքերից կառուցելու կողմնակից է: Արտահայտված սիոնիստական հայացքների հետ մեկտեղ հանդես է գալիս որոշակի կրոնական սահմանափակումների օգտին, որի պատճառով իսրայելական մամուլում երբեմն նրան անվանում են «աշխարհիկ սիոնիստ»:

Թերևս ամենածանր պարտությունը կրեց իշխող քաղաքական կոալիցիայի մաս կազմող, Իսրայելի քաղաքական ներկապնակի ձախ թևը ներկայացնող *Ավոդա* կուսակցությունը (Աշխատանքային կուսակցություն), որի նախագահն է Իսրայելի 1999-2000թթ. վարչապետ Էհուդ Բարաքը: Վերջինս 2006թ. զբաղեցնում է Իսրայելի պաշտպանության նախարարի պաշտոնը: Նախկին 20 մանդատների դիմաց Ավոդան կարողացավ պահպանել ընդամենը 13-ը: Ավոդայի քաղաքական ծրագրի առանցքը կազմում է «տարածքներ խաղաղության դիմաց» սկզբունքը:

11 մանդատ ստացավ սիոնիստական և օրթոդոքսալ կրոնական հայացքներ դավանող *ՇԱՍ* կուսակցությունը, որը նույնպես ներկայացնում է Իսրայելի քաղաքական դաշտի աջ արմատական թևը:

[1] Ըստ Հին Կտակարանի, աստծո կողմից հրեաներին խոստացված ավետյաց երկիրը: Էրեց-Իսրայել անվան տակ հասկանում են նաև պատմական Իսրայելը:

2%-անոց շեմը հաղթահարել և Կնեսետում իրենց ներկայացվածությունն ապահովել են ևս 7 մանր կուսակցություններ, այդ թվում՝ 2 արաբական (ՌԱՀԱՄ-ԹԱԼ, ԲԱԼԱԴ): Ընդհանուր առմամբ, աջ ուժերը, այդ թվում և սիոնիստական կուսակցությունները ձեռք բերեցին 65 մանդատ, իսկ ձախ ուժերը՝ 44: Կնեսետի մյուս 11 տեղերը զբաղեցրին արաբական և կոմունիստական կուսակցությունները:

Քաղաքական պայքարը սկսվում է ընտրություններից հետո

Իսրայելի քաղաքական համակարգի և գործող խաղի կանոնների պարագայում ընտրություններից հետո քաղաքական պայքարը ոչ թե հանդարտվում, այլ ձեռք է բերում նոր որակ և բովանդակություն: Որպես կանոն՝ դոմինանտ 2-3, երբեմն նաև ավելի շատ կուսակցությունների միջև, որոնք հաճախ քարոզարշավի ժամանակ հանդես են եկել ընդհուպ իրարամերժ դիրքերից, սկսվում են բազմակողմ բանակցություններ քաղաքական կոալիցիա ձևավորելու և կառավարության դիրիժորական փայտիկը ստանձնելու շուրջ: Այստեղ քաղաքական խաճանկարը կարող է ձեռք բերել ամենախայտաբղետ երանգներ: Ինչպես ասում են, «քաղաքականությունը հնարավորությունների արվեստ է»: Հատկանշական է, և այդ մասին նշում են նաև իսրայելական վերլուծական աղբյուրները, որ այդ բանակցությունները բազմիցս վերածվել են պարզունակ քաղաքական առևտրի: Բոլոր կուսակցությունների հետ ունեցած քաղաքական *կոնսուլտացիաների* արդյունքում երկրի նախագահն ամենաշատ երաշխավորություններ ստացած և ամենամեծ կոալիցիա կազմելու հնարավորություն ունեցող կուսակցության ղեկավարին լիազորում է ձևավորել կառավարություն:

Փետրվարի 10-ի ընտրություններից հետո պարզ դարձավ, որ կառավարության ղեկը ստանձնելու հնարավորություն ունեն 2 կուսակցություն՝ Քադիման կամ Լիկուդը: Երկու կուսակցությունների լիդերներն էլ հայտարարեցին իրենց հաղթանակի մասին: Ցիպի Լիվնին պնդում էր, որ իր կուսակցությունը բոլորից շատ ձայներ է հավաքել, իսկ Բ.Նեթանյահուն մատնանշում էր այն փաստը, որ ընտրություններում հաղթանակ են տարել աջ ուժերը, հետևաբար կառավարությունը պետք ձևավորի ինքը: Վերոհիշյալ կուսակցությունների կողմից սկսվեց «կողմնակիցների հավաքագրման» քաղաքական բանակցությունների ավանդույթ դարձած գործընթացը: Փետրվարի 13-ին, բուն բանակցային գործընթացների նախաշեմին, բավական ճկուն քայլ կատարեց ՄՏԻ-ն: Հասկանալով, որ որևէ կոալիցիա չի կարող ձևավորվել առանց իր մասնակցության, կուսակցության լիդեր Ա.Լի-

բերմանը վարչապետի պաշտոնի հիմնական հավակնորդներ Լիվնիին և Նեթանյահուին փոխանցեց որևէ կոալիցիային միանալու իր ուլտրառադիկալ պայմանները: Պայմաններ, որոնք նշանակում էին բոլոր տեսակի բանակցությունների դադարեցում ՀԱՄԱՍ-ի և ահաբեկչությունը խթանող այլ կազմակերպությունների հետ, բոլոր տեսակի խնդիրների լուծում ուժային մեթոդներով, որևէ միակողմանի տարածքային զիջումների բացառում և այլն: Իսրայելական մամուլում Լիբերմանի առաջ քաշած այս դոկտրինը ստացավ «Խաղաղություն տանկային դզոտի միջոցով» անունը: Առաջ քաշված պայմանների թվում էին նաև Իսրայելի քաղաքացիության և պետության նկատմամբ լոյալության վերաբերյալ հարցը[1], քաղաքացիական ամուսնությունների մասին օրենքի ընդունումը, պետության կառուցվածքի և քաղաքական համակարգի ռեֆորմների վերաբերյալ այլ արմատական առաջարկություններ և այլն:

Շատ լավ հասկանալով, որ իր առաջ քաշած պայմանները հեշտությամբ կարող են ընդունելի լինել «բնական դաշնակից» աջակողմյան Լիկուդ կուսակցության համար, Լիբերմանն ուղղակիորեն հայտարարեց, որ Լիկուդի առաջնորդ Բենիամին Նեթանյահուին ինքը կերաշխավորի այն դեպքում, եթե վերջինս իր պայմաններն ընդունելու հետ մեկտեղ միաժամանակ ձևավորի «լայն կոալիցիա՝ կազմավորելով այսպես կոչված «ազգային միասնության կառավարություն», որում ընդգրկված կլինեն նաև ձախ ուժերը, մասնավորապես՝ Քադիման և Ավոդան: Ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, օգտվելով ստեղծված իրավիճակից՝ Լիբերմանը կատարեց բացառիկ քաղաքական քայլ: Տիրապետելով ընդամենը 15 մանդատի՝ նա ստիպեց երկու խոշոր կուսակցություններին ոչ միայն հրապարակայնորեն համաձայնել իր սկզբունքներին, այլև «քաղաքական սակարկության» մեջ մտնել իր հետ:

ՄՏԻ կուսակցության նետած այս խայծը կուլ տվեցին թե՛ Քադիման, թե՛ Լիկուդը: Չնայած այն հանգամանքին, որ ՄՏԻ պայմանները հակասում էին Քադիմայի մի շարք առանցքային քաղաքական սկզբունքներին, վերջի-

[1] Լիբերմանի կողմից առաջ քաշված այս դրույթն ունի երկու սայր: Մի կողմից՝ այն ուղղված է Իսրայելի ոչ հրեա բնակչության և հատկապես արաբների դեմ, որոնց կողմից հրեության և Իսրայելի պետության նկատմամբ հանդես բերված ոչ լոյալ վարքագծի դեպքում վերջիններս դատական կարգով կարող են զրկվել քաղաքացիությունից (սա հիշեցնում է Թուրքիայի քրեական օրենսգրքի տխրահռչակ 301 հոդվածը, որը պատիժ է սահմանում թրքությանը, իսկ այժմ արդեն թուրք ազգին հասցված վիրավորանքի համար): Մյուս կողմից՝ առաջարկվում է քաղաքացիություն չշնորհել բոլոր նրանց, ովքեր չեն ծառայում Իսրայելի բանակում, մինչդեռ ինչպես հայտնի է, բավական ստվար զանգված ներկայացնող հրեական հոգևորականությունն ազատված է զինվորական ծառայությունից:

նիս բանակցային խմբի ղեկավար Հաիմ Ռամոնը 2 օր անց հայտարարեց, թե Քադիման ընդունում է համատեղ կոալիցիա ձևավորելու համար ՄՏԻ ներկայացրած գրեթե բոլոր պայմանները, բացառությամբ «Քաղաքացիություն-լոյալություն» օրենքի: Սա նշանակում էր, որ հանուն իշխանության պահպանման Քադիման և նրա ղեկավար, Իսրայելի արտաքին գործերի նախարար Ցիպի Լիվնին պատրաստ էին տեղավորվել քաղաքական սկզբունքների նոր ձևաչափում: Այս հայտարարությունը տարակուսանք առաջացրեց Իսրայելի քաղաքական դաշտում, հատկապես ձախ ուժերի շրջանում: Ցիպի Լիվնին հավանաբար գերագնահատեց հնարավորությունները խորհրդարանական ձախ ուժերին իր շուրջը համախմբելու հարցում: Ինչպես Նեթանյահուն էր հավակնում ներկայացնել աջ ուժերի, այդ թվում ՄՏԻ 65 մանդատները, ճիշտ այդպես էլ Ցիպի Լիվնին առավել քան վստահ էր, որ ինքն անվերապահորեն կարող է ներկայացնել ձախ ուժերի բոլոր 44 մանդատները: Դրա հետ մեկտեղ, եթե նրան հաջողվեր իր կողմը գրավել նաև Ա.Լիբերմանին և նրա կուսակցությանը՝ անգամ քաղաքական հայացքների ու սկզբունքների որոշակի զիջումների պայմաններով, ապա թերևս գործընթացը կարելի էր համարել ավարտված:

Սակայն մյուս ձախ կուսակցությունները չուզեցին աջերի խաղը Քադիմայի ղեկավարության ներքո խաղալ: *Ավոդա* կուսակցության ներկայացուցիչ, Իսրայելի գյուղատնտեսության նախարար Շալոմ Սիմհոնը հայտարարեց, որ «Ավոդան երբեք և ոչ մի դեպքում Քադիմայի գրպանում չէ, ավելին, մեր խմբակցությունն ամենայն հավանականությամբ նախագահ Պերեսի մոտ չի երաշխավորի Ցիպի Լիվնիին նոր կառավարություն ձևավորելու համար: Մենք կարծում ենք, որ Լիվնին վերջին օրերին իրեն ճիշտ չպահեց...»:

Ինչ վերաբերում է Լիկուդ կուսակցությանը, ապա փետրվարի 16-ին վերջինիս կողմից ՄՏԻ-ին առաքված պաշտոնական տեղեկացման համաձայն՝ Լիկուդի համար ընդունելի են ՄՏԻ առաջ քաշած բոլոր պայմանները:

Ընտրություններից մեկ շաբաթ անց Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը սկսեց քաղաքական կոնսուլտացիաներ վարել խորհրդարանական խմբակցությունների հետ՝ ձևավորվող կոալիցիաների և վարչապետի թեկնածության շուրջ առաջարկություններ լսելու վերաբերյալ: Ինչպես և սպասվում էր, Կնեսետ մուտք գործած բոլոր աջ արմատական և ազգայնական ուժերը ներկայացնող Լիկուդ, ՄՏԻ, ՇԱՍ, Հրեական թորա, Ազգային միասնություն դաշինք, Հրեական տուն կուսակցությունները պատրաստակամություն հայտնեցին ձևավորել նոր քաղաքական կոալիցիա, իսկ վարչապետի պաշտոնում երաշխավորեցին Լիկուդ կուսակցության նախագահ

Բենիամին Նեթանյահուին, կամ ինչպես իրենք են անվանում՝ Բիբիին: Փետրվարի 20-ին Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը պաշտոնապես հանձնարարեց Նեթանյահուին ձևավորել Իսրայելի նոր կառավարություն:

Հայեցակարգերի քաղաքական անհամատեղելիություն

Նոր կառավարության ձևավորման համար տրամադրության տակ ունենալով չորս շաբաթ (այս ժամկետը նախագահի կողմից կարող է երկարացվել ևս երկու շաբաթով)՝ Բ.Նեթանյահուն առաջինը ձեռնամուխ եղավ ձախերի հետ «հարաբերությունները կարգավորելու» գործընթացին: Վերջինս ամենայն հավանականությամբ շատ լավ հասկանում էր, որ, հենվելով միայն ծայրահեղական աջ ուժերի վրա, իր ձևավորած կառավարությունը երկար կյանք չի կարող ունենալ: Բարձր տեսակարար կշիռ ունեցող մանր կուսակցությունների առկայությունը կոալիցիայի ներսում, ինչպես և ցույց տվեցին հետագա զարգացումները, իսկական դամոկլեսյան սուր են կառավարության և իր համար, որոնք հարկ եղած դեպքում առանց վարանելու կիրառելու են շանտաժի տակտիկան: Հետևաբար, Լիբերմանի առաջ քաշած թեզը՝ ձևավորել Ազգային միասնության կառավարություն, ավելի շատ ոչ թե պայման, այլ փրկության օղակ է իր համար: Այդ իսկ պատճառով Նեթանյահուի ձեռնարկած առաջին քայլերը ոչ թե կոալիցիոն գործընկերների հետ կառավարության կազմի քննարկումներն էին, այլ բանակցային գործընթացների նախաձեռնությունը վերոհիշյալ կուսակցությունների հետ: Նեթանյահուն միաժամանակ հայտարարեց, որ պատրաստ է Քադիմային զիջել կառավարության երեք ամենաառանցքային պորտֆելներից երկուսը (խոսքը պաշտպանության, արտաքին գործերի և ֆինանսների նախարարությունների մասին է):

Զգտելով չկրկնել նախորդ սխալը՝ Քադիմայի ղեկավար Ցիպի Լիվնին, ելույթ ունենալով կուսակցության խմբակցության առջև, հայտարարեց. «Այսօր Բիբիի գլխավորությամբ հիմք է դրվում ծայրահեղ աջ կառավարության համար: Դա մեր ուղին չէ, և մենք ոչինչ չունենք անելու այդպիսի կառավարության մեջ: Իսրայելի ժողովուրդը մեզ չի ընտրել, որպեսզի մենք գործիք դառնանք աջ ծայրահեղականների համար: Մեր տեղը ընդդիմությունն է, և մենք պետք է ընդդիմադիր դիրքերից պայքարենք հանուն մեր հիմնական քաղաքական գծի՝ *«երկու պետություն երկու ժողովրդի համար»:*

Բ.Նեթանյահուի և Ց.Լիվնիի միջև երկու փուլով ընթացած քաղաքական բանակցությունները Իսրայելի քաղաքական դաշտում առկա հայեցա-

կարգային երկու մոտեցումների սկզբունքային բանավեճ էին, հայեցակարգեր, որոնք ունեն արմատական և արժեհամակարգային տարբերություններ: Այդ իսկ պատճառով, ինչպես և սպասվում էր, բանակցությունները չտվեցին շոշափելի արդյունքներ: Բանակցային գործընթացներում հիմնական տարակարծությունները վերաբերում էին Իսրայելի արտաքին քաղաքական դոկտրինին, որի շրջանակներում ձգտում են իրենց քաղաքականությունը կառուցել Քադիմա և Լիկուդ կուսակցությունները: Ինչպես հայտարարեց Ցիպի Լիվնին բանակցությունների ավարտից անմիջապես հետո, «Կոալիցիոն կառավարության ձևավորման խնդիրն առնչվում է մեկ հարցի. խոսքը «խաղաղության» հարցի մասին է»: Ըստ էության, դա այն հարցն է, որը երկու կուսակցություններում տարբեր կերպ են հասկանում: Ըստ Քադիմայի, խաղաղությունը «երկու պետություն երկու ժողովրդի համար» սկզբունքի կիրառումն է, բանակցային գործընթացները ՖԱԹՀ-ի հետ՝ ի դեմս Մահմուդ Աբասի, բանակցությունները ՀԱՄԱՍ-ի հետ, սահմանների վերաձևումը և վերադարձը 1967թ. վիճակին, Երուսաղեմի բաժանումը և այլն: Մինչդեռ աջ արմատական կուսակցությունները, այդ թվում՝ Լիկուդը, կտրականապես դեմ են վերոհիշյալ հայեցակարգային մոտեցումներին: Բենիամին Նեթանյահուն ինքը բազմիցս հայտարարել է, որ Լիկուդը երբեք բանակցությունների չի գնա ՀԱՄԱՍ-ի հետ, երբեք թույլ չի տա Երուսաղեմի բաժանում կամ հողերի վերադարձ, քանզի, ինչպես նշել է բազմիցս, «…վերադարձված յուրաքանչյուր թիզ հող անմիջապես վերածվում է իրանական բազայի, որտեղից սկսվում է գնդակոծվել Իսրայելի խաղաղ բնակչությունը»:

Մի քանի օր անց՝ մարտի 2-ին, Քադիմայի խմբակցության նիստը որոշեց դադարեցնել կոալիցիոն բանակցությունները Լիկուդի հետ և հայտարարեց իրեն խորհրդարանական ընդդիմություն: Բանակցություններում Քադիմայի անզիջում և քաղաքական սկզբունքային դիրքորոշումն ամենայն հավանականությամբ պայմանավորված էր նաև Ցիպի Լիվնիի և կուսակցության ղեկավար շրջանակների այն կանխատեսմամբ, որ կոալիցիայում ընդամենը 65 մանդատ տիրապետող նեղ, ուլտրաարմատական կառավարությունը երկար գոյատևել չի կարող: Քադիմայում թերևս համոզված էին, որ վերոհիշյալ կառավարությունը շատ արագ կրախի կմատնվի, որի արդյունքում ռոտացիայի հիման վրա կկազմավորվի նոր կոալիցիա և նոր կառավարություն՝ այս անգամ արդեն իրենց գլխավորությամբ:

Մոտավորապես նույն սցենարով ընթացան նաև Նեթանյահուի բանակցությունները Ավոդա կուսակցության նախագահ, Իսրայելի պաշտպանության նախարար Էհուդ Բարաքի հետ: Դեռևս ընտրություններից

անմիջապես հետո Ավոդայի լիդերները հայտարարեցին, որ կրած ծանր պարտությունից հետո իրենք չեն պատրաստվում կոալիցիա կազմել աջ ուժերի հետ և հանդես կգան արմատական ընդդիմության դիրքերից: Նեթանյահուի և Բարաքի բանակցությունների արդյունքում թեև վերջինս փորձեց լրատվամիջոցներով ակնարկել Լիկուդ կուսակցության շուրջ ձևավորվող կոալիցիային Ավոդայի միանալու հավանականության մասին, սակայն իր իսկ կուսակիցների կոշտ դիմադրությանն արժանանալուց հետո մարտի 8-ին հայտարարեց Նեթանյահուի հետ բանակցությունները դադարեցնելու և Ավոդայի կողմից ընդդիմության ճամբարը համալրելու մասին:

Նեթանյահուի բանակցությունների առաջին ռաունդը ձախ ուժերի հետ ավարտվեց անհաջողությամբ, ընդ որում՝ դա պայմանավորված էր ոչ թե ձախ կուսակցությունների համակարգված գործողություններով (իրականում Քադիմա, Ավոդա և Մերեց[1] կուսակցությունների միջև գոյություն ունեն խոր մրցակցություն և ոչ պակաս լարված հարաբերություններ), այլև, այնուամենայնիվ, Քադիմա և Լիկուդ կուսակցությունների միջև գոյություն ունեցող արմատապես հակադիր քաղաքական դիրքորոշումներով և սկզբունքային խոր տարաձայնություններով: Կոալիցիոն զարգացումների ողջ տրամաբանությունը համենայնդեպս վկայում է, որ Իսրայելի քաղաքական համակարգում առկա այդ երկու հայեցակարգերը քաղաքականապես անհամատեղելի են:

Ինչպիսի՞ կոալիցիա է ձևավորվում աջ դաշտում

Լիկուդի և կոալիցիա կազմելու պատրաստակամություն հայտնած աջ կուսակցությունների միջև կոալիցիոն համաձայնագրերի[2] և կառավարության կազմի քննարկումների ժամանակ պարզվեց, որ ոչ միայն ձախերի, այլև աջերի հետ էլ այնքան հեշտ չէ խնդիրներ կարգավորել: Կոալիցիոն գործընկերներն ապագա վարչապետի առջև դնում էին իրարամերժ պահանջներ: Որքան կուսակցությունը փոքր էր, այնքան ավելի ագրեսիվ և ուլտի-

[1] Կնեսետում 3 ձայնով ներկայացված ձախ հայացքներ դավանող կուսակցություն: Կուսակցության ղեկավար Խաիմ Օրոնը ղեկավարում է Իսրայել-Հայաստան միջխորհրդարանական բարեկամական խումբը: Վերջինս 2008թ. մարտին Կնեսետում նախատեսվող Հայկական ցեղասպանության հարցի քննարկման նախագծի հեղինակն է, որը, ցավոք սրտի, այդպես էլ տեղի չունեցավ:

[2] Իսրայելում կոալիցիա կազմող կուսակցությունները ստորագրում են ոչ թե մեկ համաձայնագրի տակ, այլ դոմինանտ կուսակցությունը, որի կազմից նշանակվում է վարչապետ, առանձին-առանձին համաձայնագրեր է ստորագրում կոալիցիայի մաս կազմող յուրաքանչյուր կուսակցության հետ: Իսրայելի պատմության ընթացքում եղել են դեպքեր, երբ կառավարող կուսակցությունը նույն նստաշրջանի ընթացքում տարբեր կուսակցությունների հետ ստորագրել է իրարամերժ կոալիցիոն համաձայնագրեր:

մատիվ պահանջներ էր ներկայացնում Նեթանյահուին: Վերջինս, ի տարբերություն փոքր կուսակցությունների, անհամեմատ ավելի հեշտությամբ կարողացավ կառավարության կազմի և փոխադարձ պարտավորությունների մասին արագ համաձայնությունների գալ և կոալիցիոն համաձայնագրեր ստորագրել ՄՏԻ և ՇԱՍ կուսակցությունների հետ:

Ըստ Լիկուդի և ՄՏԻ-ի միջև ստորագրված համաձայնագրի, Նեթանյահուի կաբինետում ՄՏԻ-ին կտրամադրվի 5 նախարարական պորտֆել, այդ թվում՝ արտաքին գործերի նախարարությունը, որը հետագայում, բնականաբար, զբաղեցրեց Լիբերմանը: ՄՏԻ նախարարներից երեքը կընդգրկվեն Իսրայելի ռազմաքաղաքական կաբինետի[1] կազմում: ՄՏԻ-ն կստանձնի նաև խորհրդարանական մի քանի հանձնաժողովների ղեկավարությունը: Համաձայնագրում արտացոլված են բանակցությունների նախնական փուլում ՄՏԻ-ի առաջ քաշած անխտիր բոլոր պայմանները: Մի հատկանշական հանգամանք. Լիբերմանը հանդես է գալիս ԱՊՀ երկրների և հատկապես Ռուսաստանի հետ երկկողմ հարաբերությունները զարգացնելու օգտին և համաձայն ձեռք բերված պայմանավորվածության՝ ՄՏԻ ներկայացուցիչները կղեկավարեն նաև ԱՊՀ երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի, Ղազախստանի և Ուզբեկստանի հետ միջխորհրդարանական բարեկամական խմբերը[2]:

Ըստ Լիկուդի և ՇԱՍ կուսակցության միջև ստորագրված համաձայնագրի, վերջինիս կտրամադրվեն 4 նախարարություններ, այդ թվում՝ ներքին գործերի նախարարությունը, որը ղեկավարեց կուսակցության նախագահ Էլի Իշայը: «Ավելի շատ հուդաիզմ» սկզբունքի անվան տակ ՇԱՍ-ը պետական գանձարանից կստանա 1 մլրդ 400 մլն շեքել (մոտ 350 մլն ԱՄՆ դոլար), իր համակարգում գործող իեշիվների[3] զարգացման համար:

[1] «Նեղ կառավարություն», «անվտանգության կաբինետ»: Այլ կերպ՝ Իսրայելի անվտանգության խորհուրդը: Կառավարական նեղ մարմին, որը որոշում է Իսրայելի անվտանգության, ռազմական և պետական քաղաքականության գրեթե բոլոր առանցքային հիմնահարցերը:

[2] Հետաքրքրական է, որ վերոհիշյալ ցանկում նշված չէ անդրկովկասյան որևէ հանրապետություն: Կնեսետի նախորդ գումարման ընթացքում Իսրայել-Ադրբեջան պատգամավորական բարեկամական խումբը ղեկավարել է ՄՏԻ անդամ, ծնունդով Բաքվից, արտահայտված հայատյացությամբ աչքի ընկնող Իոսիֆ Շագալը, որն այլևս ներկա գումարման պատգամավոր չէ: Վերջինիս նախաձեռնությամբ և ակտիվ ջանքերով 2007թ. Ա.Լիբերմանը, որն այն ժամանակ զբաղեցնում էր Իսրայելի ստրատեգիական պլանավորման նախարարի պաշտոնը, այցելել է Բաքու և ունեցել մի շարք հանդիպումներ Ադրբեջանի իշխանությունների հետ: Ինչ ճակատագիր է սպասում Իսրայել-Ադրբեջան պատգամավորական բարեկամական խմբին և ով կղեկավարի այն, առայժմ հայտնի չէ:

[3] Հրեական պատմության ընթացքում իեշիվներ անվանվել են հոգևոր ուսումնական հաստատությունները, որոնք նախատեսվել են «բանավոր օրենքի» *(устный закон)* և մասնավորապես՝ Թալմուդի ուսուցման համար: 2000 տարուց ավելի իեշիվները հանդիսացել են հրեաների և հրեության պահպանման ու զարգացման հիմնական ինստիտուտներից մեկը:

Շատ ավելի բարդ խնդիրներ ծագեցին Հրեական տուն, Ազգային միասնություն դաշինք և Հրեական թորա կուսակցությունների հետ կոալիցիայի շրջանակներում ընթացող բանակցությունների ժամանակ: 3-5 մանդատ տիրապետող վերոհիշյալ կուսակցություններն, օգտվելով Նեթանյահուի տվյալ պահի «անօգնական» վիճակից, վերջինիս առջև դնում էին ընդհուպ անիրականանալի պայմաններ: Հրեական հոգևորականության առավել ագրեսիվ և ռեակցիոն շրջանակները ներկայացնող Հրեական թորա կուսակցությունը նույնիսկ պահանջում էր չեղյալ հայտարարել կոալիցիոն համաձայնագիրը ՄՏԻ-ի հետ, որն «աշխարհիկ սիոնիզմի» հետ ունի այսպես ասած «խոր, գաղափարական» տարաձայնություններ:

«Ոսպով ապուրը» 21-րդ դարում

Նեթանյահուն շատ լավ հասկանում էր, որ այսպես ինքը երկար գոյատևել չի կարող: Մարտի 20-ին նա Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսից խնդրեց ևս երկու շաբաթ ժամանակ՝ կոալիցիոն կառավարության ձևավորումը վերջնական տեսքի բերելու համար: Որպեսզի ամբողջությամբ կախված չմնա աջ սիոնիստական մանր կուսակցությունների քմահաճույքներից և վերջնականապես հույսը կտրելով Քադիմայի հետ համաձայնության գալու հեռանկարից՝ Նեթանյահուին մնում էր միայն օգտագործել վերջին հնարավորությունը՝ ցանկացած գնով լեզու գտնել Ավոդա կուսակցության հետ: Որպես հին ու թրծված քաղաքական գործիչ, որը շատ լավ է հասկանում Իսրայելի պետական համակարգի քաղաքական տրամաբանությունը, Նեթանյահուն կարողացավ շատ արագ ու կտրուկ գործի դնել լոբբիստական հզոր մեխանիզմներ, որոնցում ներգրավվեցին Իսրայելի ռազմական, տնտեսական, գործարար և հասարակական ոլորտների շատ կարող շրջանակներ: Այդ օրերին Իսրայել ժամանեցին տարբեր երկրների ազդեցիկ հրեական կազմակերպությունների ու լոբբիստական միավորումների ներկայացուցիչներ, բիզնես մագնատներ: Մամուլում մի քանի կցկտուր ու խորհրդավոր լուրեր շրջանառվեցին, թե դա արվում է հատկապես Ավոդայի վրա ճնշում գործադրելու նպատակով: Որպես հիմնավորում ներկայացվում էր Ավոդայի ղեկավար Էհուդ Բարաքի խոստովանությունն ընկերական շատ նեղ միջավայրում:

Եթե կոալիցիոն գործընթացների մեկնարկային փուլում բավական գրագետ ու հաշվենկատ կեցվածք որդեգրեց Ավիգդոր Լիբերմանը, ապա եզրափակիչ փուլում անչափ ճկուն գտնվեց Էհուդ Բարաքը: Իսրայելական «Նյուզռու» կայքի պատկերավոր բնորոշմամբ. «…ընտրություններում

կրած ծանր պարտությունից հետո, երբ թվում էր, թե Ավոդայի համար ամեն ինչ վերջացած է, օգտվելով ստեղծված իրավիճակից՝ Բարաքը կարողացավ բավական թանկ գնով «վաճառվել» փրփուրներից կախված Բիբիին»: Ավոդայի համար պահը շատ հարմար ստացվեց: Նախ կոալիցիայում ընդգրկվող մանր կուսակցությունները հարկ եղածից ավելի պահանջատիրական կեցվածք որդեգրեցին՝ անցնելով ընդհուպ շանտաժի տակտիկային, իսկ Քադիման բանակցային գործընթացներում իրեն շատ կոշտ ու սկզբունքային պահեց, այնպես որ, Նեթանյահուն արդեն պարտադրված էր Ավոդային կոալիցիա ներքաշելու համար շատ թանկ գին վճարել, ինչից ճարպկորեն օգտվեց Էհուդ Բարաքը:

Կոալիցիայի կազմում Ավոդայի ընդգրկվել-չընդգրկվելու հարցը որոշելու համար մարտի 25-ին նախատեսվեց հրավիրել կուսակցական համաժողով, որը փակ քվեարկությամբ պետք է վերջնականապես որոշում կայացներ վերոհիշյալ հարցի կապակցությամբ: Չսպասելով համաժողովի որոշմանը՝ մարտի 24-ին Բարաքի և Նեթանյահուի միջև կոալիցիոն համաձայնագիրն, այնուամենայնիվ, ստորագրվեց: Ավոդայում այդ փաստը միանշանակ չընդունեցին: Կուսակցական էլիտայի բավական ազդեցիկ ներկայացուցիչներ, մասնավորապես՝ գլխավոր քարտուղար Էյթան Կաբելը, Կնեսետի պատգամավորներ Օֆիր Պինես-Պազը, Շելի Յահիմովիչը և այլք կտրուկ դեմ արտահայտվեցին այդ գործընթացին: Չնայած ուժգին դիմադրությանը, մարտի 25-ին Ավոդայի համաժողովը փակ քվեարկությամբ, ձայների ոչ շատ մեծ առավելությամբ հավանություն տվեց կոալիցիային միանալու Էհուդ Բարաքի ստորագրած համաձայնագրին:

Նեթանյահուն իսկապես շատ թանկ գին վճարեց Էհուդ Բարաքի մատուցած «ոսպով ապուրի» համար: Բարաքը կլինի փոխվարչապետ՝ միաժամանակ պահպանելով նաև պաշտպանության նախարարի պաշտոնը: Ավոդային տրամադրվեց ևս չորս նախարարական պորտֆել, ընդ որում՝ նախարարներից երկուսը կդառնան Իսրայելի ռազմաքաղաքական կաբինետի անդամներ: Ավոդային հատկացվեց նաև Կնեսետի չորս հանձնաժողով՝ պաշտպանության և անվտանգության, արտաքին գործերի, լուսավորության, ինչպես նաև ալիայի[1] ու աբսորբցիայի: Էհուդ Բարաքը կներգրավվի Իսրայելի կողմից ընթացող անխտիր բոլոր բանակցային գործընթացներին, իսկ անվտանգության և հատուկ ծառայությունների ղեկավար-

[1] Հրեաների հայրենադարձությունը Իսրայել: Մինչև Իսրայելի հիմնադրումը «ալիա» էր համարվում, հրեաների վերադարձը Էրեց-Իսրայել: Սիոնիզմի հիմնական հասկացություններից է: Հայրենադարձված (ալիայի ենթարկված) հրեաներին անվանում են օլիմներ: Այսպես՝ Իսրայելի հրեա բնակչության մեծ մասն այսօր օլիմներ են կամ նրանց սերունդներ:

ները կնշանակվեն և կազատվեն նրա համաձայնությամբ:

Հանուն այս ամենի՝ ընտրություններում պարտված Էհուդ Բարաքը նահանջեց իր քաղաքական համոզմունքներից: Որքան էլ վերջինս ճգնում է ապացուցել, որ իրենք մտան կոալիցիա, որովհետև այդպես էր ցանկանում Իսրայելի ժողովուրդը, որ իրենք չեն հրաժարվում իրենց սկզբունքներից, որ դա արվեց, որպեսզի ծայրահեղ աջ կառավարությանը ներսից կարողանան հակակշիռ հանդիսանալ, այնուամենայնիվ, Իսրայելի քաղաքական և վերլուծական շրջանակները փաստում են, որ Ավոդան հետ կանգնեց իր սկզբունքներից՝ դառնալով գործիք աջ ուժերի ձեռքին: Կոալիցիոն համաձայնագրում թեև նշվում է, որ կառավարությունը Նեթանյահուի գլխավորությամբ կշարունակի վարել խաղաղ բանակցային գործընթաց արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման նպատակով, ինչպես նաև այն, որ Իսրայելի բոլոր նախկին, այդ թվում՝ խաղաղասիրական միջազգային համաձայնագրերն ու ստանձնած պարտավորությունները կառավարության կողմից կպաշտպանվեն[1], այնուամենայնիվ, համաձայնագրում որևէ խոսք չկա Պաղեստինի պետականության և «երկու պետություն երկու ժողովուրդների համար» սկզբունքի մասին:

Ավոդայի կողմից կոալիցիոն համաձայնագիրը ստորագրելուց հետո Հրեական տուն, իսկ մի քանի օր անց նաև Հրեական թորա կուսակցությունները Լիկուդի հետ ստորագրեցին կոալիցիոն համաձայնագրեր, սակայն արդեն առանց վերջնագրային պահանջների:

Կոալիցիոն բանակցությունների նախնական փուլում Ցիպի Լիվնին ենթադրում էր, որ Նեթանյահուն ունի միայն մեկ տարբերակ՝ ձևավորել նեղ, աջ արմատական կառավարություն, որին բաժին կընկնի ուժեղ և կազմակերպված ընդդիմություն՝ հանձինս Քադիմա, Ավոդա և Մերեց կուսակցությունների: Այդ իսկ պատճառով վերջինս Լիկուդի հետ բանակցությունների ընթացքում որդեգրեց շատ կոշտ ու սկզբունքային դիրքորոշում՝ հրաժարվելով Լիկուդի ղեկավարի բոլոր շռայլ առաջարկություններից՝ ենթադրելով, որ վերջինիս կառավարությունը նույնիսկ մեկ տարի դժվար թե գոյատևի: Քադիմայում ոչ ոք չէր ենթադրում, որ իրենցից ավելի ձախ Ավոդան հանկարծ կարող է միանալ կոալիցիային, անգամ շատ թանկ գնով: Լիվնին այլևս հասկանում է, որ ինքը հայտնվել է ծուղակում: Ոչ թե

[1] Արտգործնախարարի պաշտոնը ստանձնելուց հետո նույն օրն իսկ Ա.Լիբերմանը հայտարարեց, որ Իսրայելի նոր կառավարությունն ամենևին էլ չի պատրաստվում պատասխանատվություն կրել Անապոլիսյան համաձայնագրի դրույթների համար: Հիշեցնենք, որ այդ համաձայնագրում, որը ստորագրվել է 2007թ. Էհուդ Օլմերթի, Մահմուդ Աբասի և Ջորջ Բուշի կողմից, ամրագրված է երկու պետության սկզբունքը:

Բիբին է ձևավորել նեղ կառավարություն, այլ ինքն է դարձել «նեղ ընդդիմություն», որտեղից չի կարող ունենալ որևէ ռեալ ու գործուն միջամտություն երկրում ընթացող գործընթացների վրա: Ի դեպ, Իսրայելի պատմության ընթացքում առաջին դեպքն է, երբ ամենամեծ թվով ձայներ հավաքած կուսակցությունը հայտնվում է արմատական ընդդիմության կարգավիճակում: Քադիմայի լիդերներին մնում էր միայն Էհուդ Բարաքին անվանել «սկզբունքների ու արժեքների դավաճան», իսկ Ավոդան՝ «գաղափարապես սնանկացած կուսակցություն»:

Թեև Ավոդայի ներկայությունը կոալիցիայում որևէ լուրջ ներգործություն չի թողնում կառավարության ընդհանուր քաղաքական ուղեգծի վրա, բայց վերջինիս օգնությամբ Նեթանյահուն ստեղծում է լայն կոալիցիայի և ազգային միասնության կառավարության պատրանք, որն, օգտվելով խիստ ազդեցիկ իսրայելական արհմիությունների (Հիստադրուտ), արդյունաբերողների և խոշոր գործարարների աջակցությունից, կարող է և երկար կյանք ունենալ՝ երկրում ապահովելով ներքաղաքական կայունություն:

Նեթանյահուն ձևավորել է Իսրայելի պատմության ընթացքում ամենամեծաքանակ կառավարությունը՝ բաղկացած 30 նախարարից, սակայն, ինչպես բնորոշեց հենց ինքը՝ Նեթանյահուն, դա այն գինն է, որն անհրաժեշտ է երկրում ներքաղաքական կայունություն ապահովելու համար:

Եվ այսպես, չնայած այն հանգամանքին, որ ձախակողմյան Ավոդա կուսակցությունը մաս կազմեց նոր կոալիցիայի, Իսրայելում Կնեսետի 18-րդ գումարման ընտրությունների արդյունքում, ինչպես և սպասվում էր, ձևավորվում է աջ արմատական կոալիցիոն կառավարություն:

Արաբական աշխարհն ու միջազգային հանրությունն Իսրայելի ընտրությունների մասին

Իսրայելում տեղի ունեցած ընտրությունները հայտնվեցին ողջ աշխարհի լրատվամիջոցների և վերլուծական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Հատկապես բուռն էր արաբական աշխարհի արձագանքը: Սաուդյան Արաբիայի մամուլն առանձնահատուկ կերպով անդրադարձավ Նեթանյահու-Լիբերման ալյանսին՝ այն անվանելով «ծայրահեղ աջ սպառնալիք» արաբական աշխարհի համար: Սաուդյան Արաբիայի լրատվամիջոցներից շատերն էլ առանձնապես մեծ տարբերություն չէին տեսնում կառավարության ղեկավարի երկու թեկնածուների՝ Ցիպի Լիվնիի և Բենիամին Նեթանյահուի միջև՝ նրանց պայքարը հանուն իշխանության անվանելով Իսրայելի «ազգային սպորտի» հերթական տարատեսակություններից մեկը:

Լոնդոնում հրատարակվող «Ալ-Կուդս-Ալ-Արաբի» պարբերականն իր առաջնորդողում գրեց, որ «…Լիվնիի և Նեթանյահուի մրցակցության արդյունքում տուժելու է բացառապես խաղաղության գործընթացը»: Նույն թերթը հաջորդ օրը, դիմելով միջազգային հանրությանը, կոչ արեց բոյկոտել Իսրայելի ցանկացած կառավարություն, որում ընդգրկված կլինի ՄՏԻ կուսակցությունը Լիբերմանի գլխավորությամբ: Յասիր Արաֆաթի նախկին խորհրդական, դոկտոր Ահմեդ Թիբին Թունիսում տված հարցազրույցում նույնպես կոչով դիմեց միջազգային հանրությանը՝ բոյկոտել Իսրայելի կառավարությանը, եթե այնտեղ ընդգրկվի Ավիգդոր Լիբերմանը:

ՀԱՄԱՍ-ի «Ար-Ռիսալա» թերթը գրեց, որ «…Կնեսետի ընտրությունների ողջ քարոզարշավը կառուցված էր այն բանի վրա, թե ով ավելի շատ պաղեստինյան արյուն կհեղի, ուստի ով էլ գլխավորի կոալիցիոն կառավարությունը, Պաղեստինի հոգսը չի թեթևանա»: Իսկ ՀԱՄԱՍ-ի ներկայացուցիչը հայտարարեց. «Մեզ համար միևնույն է՝ ով կղեկավարի Իսրայելի կառավարությունը: Նեթանյահուի և Լիվնիի միջև որևէ տարբերություն չկա, նրանք երկուսն էլ պատերազմի հանցագործներ են»:

Անհամեմատ ավելի լավատեսական էր սաուդյան հայտնի գործարար Ֆարես Ալ-Ասրի «Արաբ Նյուզ» կայքում զետեղված հոդվածը, որտեղ վերջինս, անդրադառնալով Նեթանյահուի կոալիցիոն կառավարության ղեկավար նշանակվելու փաստին, նշում է, որ «դա թերևս չի կարելի համարել ամենավատ սցենարը… խաղաղությունն արաբների հետ, որպես կանոն, հաստատել են Իսրայելի աջ գործիչները, օրինակ, Մենահեմ Բեգինը, մինչդեռ ձախ գործիչները, մասնավորապես՝ Հոլդի Մեիրը կամ Շիմոն Պերեսն այնքան էլ աչքի չեն ընկել խաղաղասիրական նախաձեռնություններով»:

«Հիզբալլահ»-ի առաջնորդ շեյխ Հասան Նասրալլան շնորհակալություն հայտնեց իսրայելցիներին «անկեղծության համար» և հայտարարեց. «Բոլոր նրանք, ովքեր նպատակ ունեին վախեցնել Լիբանանի ժողովրդին, վաղուց պարտության են մատնվել՝ Բեգինը, Շարոնը, Ռաբինը, Նեթանյահուն, Բարաքը, Օլմերթը, Լիվնին…, այժմ հերթը Լիբերմանինն է»:

Ընտրություններին արձագանքեցին նաև Պաղեստինյան Ինքնավարության առաջնորդները: Այսպես՝ ՊԻ նախագահ Մահմուդ Աբասի մամլո քարտուղար Աբու-Ռուդեյնը հայտարարեց. «Իսրայելի ցանկացած կառավարությունից, ով էլ այն ղեկավարի, մենք կպահանջենք իրականացնել այն խոստումները, որոնք ստացել ենք նախորդ կառավարությունից: Մենք պատրաստ ենք բանակցել Իսրայելի ցանկացած կառավարության հետ, սակայն բանակցությունները կվերսկսենք այն կետից, որտեղ մեզ հաջողվել է համաձայնություն ձեռք բերել նախորդ կառավարությունից»: Ավելի ուշ իր

մամլո խոսնակի խոսքերը հաստատեց նաև ինքը՝ Մահմուդ Աբասը:

Ուշագրավ անդրադարձեր կատարվեցին նաև արևմտյան մամուլի կողմից: Այսպես՝ «Վաշինգտոն Պոստը», վերլուծելով ընտրությունների արդյունքները, մատնանշեց, որ Իսրայելի հասարակությունում տեղի է ունեցել «աջ տեղաշարժ», բնականաբար, ընդդեմ պաղեստինցիների: Ընդհանուր առմամբ «Վաշինգտոն Պոստի» վերլուծություններն աչքի են ընկել իսրայելամետ դիրքորոշումներով: Մասնավորապես՝ թերթը նաև գրեց, որ «ԱՄՆ-ը և Իսրայելը ՀԱՄԱՍ-ը ճանաչում են որպես ահաբեկչական կազմակերպություն և գլխավոր խնդիրը վերջինիս զինաթափումն է»:

«Թայմ» շաբաթաթերթը կանխատեսեց, որ ամենայն հավանականությամբ Իսրայելի նոր կառավարությունը հակված չի լինի բանակցությունները շարունակել «երկու պետություն երկու ժողովրդի համար» սկզբունքով, միաժամանակ պատերազմը Գազայում պաղեստինյան ժողովրդին մղում է միավորվելու ՀԱՄԱՍ-ի շուրջը: Այս երկու գործոնների պայմաններում խաղաղության տեսլականը տարածաշրջանում լավատեսության հիմքեր չի թողնում: Մահմուդ Աբասը շուրջ ութ տարի ապարդյուն ձգտում է բանակցությունների միջոցով կարգավորել խնդիրներն Իսրայելի հետ, մինչդեռ Գազայի պատերազմից հետո պաղեստինցիների միակ և ռեալ լիդեր այլևս ընկալվում է ՀԱՄԱՍ-ը:

«Ասիա Թայմս» կայքում վերլուծաբան Ջիմ Լոուբը բավական մռայլ եզրահանգումներ է կատարել ԱՄՆ-Իսրայել փոխհարաբերություններում՝ կանխատեսելով երկու դաշնակից պետությունների հարաբերություններում արտահայտված վատթարացում: Լոուբը նշում է, որ ԱՄՆ նախագահ Բ.Օբաման «երկու պետություն երկու ժողովուրդների համար» հայեցակարգի կողմնակից է, մինչդեռ աջ արմատական Նեթանյահուն դժվար թե ընտրի վերադարձի ճանապարհը 1967թ. իրավիճակին: Այս ամենը կարող է փակուղային իրավիճակ ստեղծել ԱՄՆ-Իսրայել փոխհարաբերություններում:

Նեթանյահուի վարչապետ նշանակվելու կապակցությամբ որոշակի անհանգստություն են ցուցաբերում նաև Եվրամիությունում, որտեղ մտավախություններ կան, որ Նեթանյահուն կարող է վիժեցնել բանակցային գործընթացը Պաղեստինի հետ: Մասնավորապես՝ նման անհանգստություն են արտահայտել Շվեդիայի արտգործնախարար Կառլ Բիլդտը և Չեխիայի փոխվարչապետ Ալեքսանդր Վոնդրը:

Ուշագրավ դիտարկում է կատարել «Հերալդ Թրիբյունը»: Վերջինս, անդրադառնալով 2008թ. ամռանը Երուսաղեմում կայացած Նեթանյահուի և դեռևս նախագահության թեկնածու Բ.Օբամայի հանդիպմանը, նշում է,

որ հանդիպման ավարտին Օբաման մասնակիցների խմբից մի կողմ է տանում Նեթանյահուին և բառացիորեն ասում. «Մենք ընդհանուր շատ բան ունենք, ես իմ քաղաքական գործունեությունը սկսել եմ ձախ թևում, հետո տեղափոխվել եմ կենտրոն: Դուք սկսել եք աջ թևում և նույնպես տեղափոխվել եք կենտրոն: Մենք երկուսս էլ պրագմատիկներ ենք, որոնք գերադասում են կոնկրետ գործերով զբաղվել»: «Հերալդ Թրիբյունը» կանխատեսում է, որ որպես կառավարության ղեկավար Նեթանյահուն, անշուշտ, հանդես կբերի անհրաժեշտ պրագմատիզմ:

Միջազգային հանրության վերաբերմունքն ու ներկայիս մոտեցումներն արաբա-իսրայելյան հակամարտության վերաբերյալ շատ հստակ, կոռեկտ, ընդամենը երկու նախադասության մեջ խտացված կերպով արտահայտեց Բարաք Օբաման մարտի 24-ի մամլո ասուլիսի ժամանակ: «Հնարավո՞ր է արդյոք խաղաղություն Պաղեստինի և Իսրայելի միջև, որի կառավարության ղեկավարը Նեթանյահուն է, իսկ արտգործնախարարը՝ Լիբերմանը» հարցին ԱՄՆ նախագահը պատասխանեց. «Մենք դեռ չգիտենք, թե ինչի նման կլինի Իսրայելի նոր կառավարությունը, չգիտենք նաև, թե իրենից ինչ կներկայացնի Պաղեստինի ապագա ղեկավարությունը: Սակայն գիտենք մի բան, ներկա ստատուս-քվոն կենսունակ չէ և պետք է կարողանալ որոշում կայացնել երկու պետությունների ստեղծման մասին, որի արդյունքում իսրայելցիները և պաղեստինցիները կապրեն կողք կողքի, յուրաքանչյուրն իր պետության մեջ, խաղաղության և անվտանգության պայմաններում»:

Ամփոփում

Խորհրդարանական ընտրությունների արդյունքում Իսրայելի քաղաքական կյանքում տեղի են ունեցել նոր վերադասավորումներ, որոնց արդյունքներն, անշուշտ, իրենց հետքը կթողնեն տարածաշրջանում ընթացող քաղաքական գործընթացների վրա: Ինչ քաղաքական դիմագիծ կընդունի, ինչ քաղաքական վարքաբանություն հանդես կբերի Նեթանյահուի կառավարությունը, ցույց կտա մոտ ապագան: Ինչպիսին կլինի միջազգային հանրության վերաբերմունքն Իսրայելի նոր ձևավորվող կառավարության այս կամ այն քաղաքական ուղեգծին, նույնպես ցույց կտա մոտ ապագան: Համենայնդեպս, Իսրայելի համար այսօր այնքան էլ հեշտ չէ դիմակայել արտաքին մարտահրավերներին: Իսրայելի ավանդական դաշնակից Ամերիկայի Միացյալ Նահանգների նոր վարչակարգն անհամեմատ ավելի լոյալ վերաբերմունք է հանդես բերում մերձավորարևելյան տարածաշրջա-

նում ընթացող իրադարձությունների նկատմամբ, ինչը ցայտուն կերպով արտացոլվեց նաև ԱՄՆ պետքարտուղար Հ.Քլինթոնի՝ վերջերս տարածաշրջան կատարած այցելության ժամանակ: Կարծես կնճիռներ են առաջանում նաև Իսրայելի մեկ այլ ավանդական դաշնակցի՝ Թուրքիայի հետ փոխհարաբերություններում: Ամեն դեպքում, Իսրայելի և հրեական լոբբիստական կազմակերպությունների կողմից պահանջվելու են ավելի մեծ ջանքեր գործադրել տարածաշրջանային և աշխարհաքաղաքական գլոբալ գործընթացներում իրենց համար շահեկան լուծումներ գտնելու համար:

Եվ ամենևին պատահական չէ, որ նոր կառավարության երդման արարողության նախորդ օրը Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը երկօրյա այցով մեկնեց Պրահա (Չեխիան ներկա պահին Եվրամիության նախագահող երկիրն է): Այցի նպատակն է՝ համոզել եվրոպացիներին, որ Նեթանյահուի կառավարությունը «խաղաղ գործընթացի» կողմնակից է և կշարունակի իրականացնել այդ ուղղությամբ սկսված աշխատանքները:

Վերջին 2-3 ամիսներին տեղի ունեցած իրադարձությունները՝ պատերազմը Գազայում, Կնեսետի ընտրությունների արդյունքները և միջազգային հանրության ոչ միանշանակ ռեակցիան այդ արդյունքներին, տարածաշրջանում իրադարձությունների զարգացման նոր սցենարներ են խոստանում, ինչին մենք ամենայն հավանականությամբ ականատես կլինենք մոտ ժամանակահատվածում:

Ստեղծված իրավիճակում, կարծում ենք, Հայաստանի դիվանագիտական և վերլուծական ծառայություններն առաջիկայում պետք է ուշադրության կենտրոնում պահեն Իսրայելում և նրա շուրջ ընթացող զարգացումներն, ըստ մեզ, երկու պատճառով:

Առաջին՝ հավանաբար արդեն ժամանակն է, որ Հայաստանը կարողանա կարգավորել հարաբերություններն Իսրայելի հետ, հաստատել լիարժեք դիվանագիտական հարաբերություններ և համագործակցության ընդհանուր եզրեր փնտրել ոչ միայն Իսրայել պետության, այլև աշխարհի տարբեր երկրներում ու միջազգային կազմակերպություններում գործող իսրայելական լոբբիստական կենտրոնների հետ, ինչն, անշուշտ, կարող է օգտակար լինել մեզ համար:

Նկատենք, որ ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչությունը Իսրայելի հետ փոխհարաբերություններում առայսօր նախաձեռնություն հանդես չի բերել, և այդ բացը հարկավոր է լրացնել այժմ:

Երկրորդ՝ Հայությունը Երուսաղեմում ունի անչափ ծանրակշիռ ներկայացվածություն՝ ի դեմս Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանական միաբանության: Ունի նաև ազգային արժեք ներկայացնող պատկառելի հարստություններ, որոնց ոչ միայն զարգացման ու բարգավաճման, այլև պահպանման հարցն այսօր արդեն լուրջ խնդիր է ներկայացնում, որի համար զգացվում է պետական ուղղորդված ռազմավարության մշակում և իրականացում:

Սա արդեն բոլորովին այլ թեմա է, և իր ակտուալությամբ հանդերձ պարունակում է քննարկման հարուստ նյութ, որին, հուսով ենք, ապագայում անպայման լրջորեն կանդրադառնան Հայաստանի քաղաքագիտական, վերլուծական և դիվանագիտական շրջանակները:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ՝ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՇԵՄԻՆ

Կարեն Վերանյան

Ադրբեջանի ռազմական ծախսերի շեշտակի ավելացման և վերջինիս կողմից Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի (այսուհետ՝ ԵՍԶՈՒՊ) խախտման մասին բազմիցս է խոսվել, ինչը կարևոր նշանակություն ունի Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգության ու կայունության պահպանման տեսանկյունից։ Վերջին կես տասնամյակում, սակայն, Ադրբեջանի ռազմական համակարգում արձանագրված նոր միտումները թույլ են տալիս լուրջ վերապահումներով մոտենալ Հարավային Կովկասում հնարավոր կայունության հեռանկարներին ընդհանրապես։ Խոսքը վերաբերում է Ադրբեջանի ղեկավարության՝ սեփական ռազմարդյունաբերությունը զարգացնելու քայլերին, ինչի հիմքերը դրվեցին 2005թ. վերջին՝ Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության հիմնադրմամբ։ Չնայած նորակազմ նախարարության առջև կանգնած լուրջ հիմնախնդիրներին՝ կապված բարձրորակ կադրերի պատրաստման, անհրաժեշտ ենթակառուցվածքների արդիականացման, հսկայածավալ ֆինանսավորումների ապահովման հետ, այնուհանդերձ, արտաքին ուժերի և առաջին հերթին Թուրքիայի անմիջական շահագրգռվածությամբ Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության հիմնադրումով երկրում արվում են ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման առաջին քայլերը։ Ադրբեջանի ռազմարդյունաբերության զարգացումը Հարավային Կովկասի կայունության համար աղետալի հետևանքներ կարող է ունենալ, ինչն անտեսվում է միջազգային հանրության կողմից։ Հարևան հանրապետության ռազմական համակարգում վերջին տարիներին արձանագրված միտումները կարևոր նշանակություն ունեն ՀՀ ազգային անվտանգության համատեքստում և հայկական կողմից լրջագույն ու հետևողական, բազմապլան մոտեցումներ են պահանջում։

Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունը

Ադրբեջանի ռազմարդյունաբերական ոլորտի արդիականացման հիմքերը դրվեցին միայն վերջերս, երբ 2005թ. դեկտեմբերի 16-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ստորագրեց Ադրբեջանի Հանրապետության Ռազմական արդյունաբերության նախարարության ստեղծման մասին հրամանագիրը (թիվ 1181)[1]: Նորակազմ նախարարությունը ձևավորվեց Ադրբեջանի Հատուկ մեքենաշինության և կոնվերսավորման պետական կոմիտեի հիման վրա:

Երկրի ռազմական արդյունաբերության նախարարության ստեղծման մասին փաստաթղթում մասնավորապես նշվում էր. «Ադրբեջանի Ռազմարդյունաբերության նախարարությունը գործադիր իշխանության կենտրոնական մարմին է, որն իրականացնում է պետական քաղաքականություն պաշտպանական, ռադիոէլեկտրոնային, սարքաշինական արդյունաբերության բնագավառում (այսուհետ՝ ռազմական արդյունաբերության ոլորտ)» («Ընդհանուր դրույթներ», գլուխ առաջին, կետ առաջին): Ներկայացնենք նորաստեղծ նախարարության՝ փաստաթղթում ամրագրված գործունեության հիմնական ուղղություններն ու պարտականությունները («Նախարարության գործունեության ուղղությունները». գլուխ երկրորդ, կետ յոթերորդ).

- մասնակցում է ռազմական արդյունաբերության ոլորտում միասնական պետական քաղաքականության ձևավորմանը և ապահովում տվյալ քաղաքականության իրագործումը[2],
- ապահովում է ռազմական արդյունաբերության ոլորտի զարգացումը,
- պետական պատվերի մասին գործող օրենսդրության համաձայն, պատրաստում է ռազմական տեխնիկայի, զինամթերքի, ինժեներային տեխնիկայի, պահեստամասերի, և ռազմական նշանակության այլ արտադրանքի շուրջ ռազմական պատվերի պետական ծրագրի նախագիծ և ներկայացնում այն Ադրբեջանի Հանրապետության կառավարությանը,
- ռազմական պատվերի մասին պետական ծրագրի համաձայն, իր լիազորությունների շրջանակներում ապահովում է ռազմական նշանակության արտադրանքի պատրաստումը, կատարելագործումը, վերանորոգումը, ներմուծումն ու արտահանումը,

[1] Նախարարական կառույցի պաշտոնական անվանումն է Պաշտպանական արդյունաբերության նախարարություն:

[2] Փաստաթղթում «ռազմարդյունաբերության ոլորտ»-ը ներկայացվում է «պաշտպանական արդյունաբերության ոլորտ» հասկացությամբ: Փաստաթղթի տեքստից դուրս այն այսուհետ կներկայացվի որպես «ռազմարդյունաբերության ոլորտ»:

- գործող օրենսդրության համաձայն, ներկայացնում է առաջարկություններ պետական բյուջեի ձևավորման վերաբերյալ՝ ռազմական պատվերի պետական ծրագրի իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին,
- ռազմական արդյունաբերության ոլորտում միջազգային համագործակցության իրականացում:

Նախարարության հիմնական պարտականություններից կարելի է առանձնացնել.

- ռազմական պատվերի մասին հաստատված պետական ծրագրի հիման վրա իր լիազորությունների շրջանակներում կազմակերպում է ռազմական նշանակության արտադրանքի գնման, պատվերների դասակարգման (աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում, գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների կատարում, արտադրության պատրաստում ու կարգավորում) մրցույթներ, ստորագրում պայմանագրեր,
- ռազմական արդյունաբերության ոլորտի շրջանակներում կոորդինացնում է գործադիր իշխանության այլ կառույցների գործունեությունը,
- իրականացնում է ռազմական արդյունաբերության ոլորտի պետական վերահսկում այն հարցերում, որոնք վերաբերում են իր լիազորություններին,
- ապահովում է ռազմական արդյունաբերության ոլորտի չափանիշներին համապատասխան արտադրանքների պատրաստման կազմակերպման համար առաջադեմ տեխնոլոգիաների կիրառումը, արդիական գիտահետազոտական բազայի ստեղծումը, ոլորտի ձեռնարկությունների սարքավորումների արդիականացումն ու բնագավառի զարգացման համար համապատասխան կադրերի պատրաստումը (գլուխ երրորդ, կետ ութերորդ):

Նախարարության առջև ծառացած առաջնահերթ հիմնահարցերից մեկը վերաբերում էր երկրի ռազմարդյունաբերության ոլորտում ներգրավված խորհրդային գիտահետազոտական ինստիտուտների ու մեքենաշինական գործարանների արդիականացմանն ու միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը: Ներկայում նախարարության ենթակայության ներքո գործում են շուրջ 20 գիտահետազոտական ձեռնարկություններ ու ինստիտուտներ: Ադրբեջանի Ռազմարդյունաբերության նախարարության հիմնման մասին հրամանագրի համաձայն, նախատեսվում էր

նախարարության ենթակայության ներքո ստեղծել գիտահետազոտական ինստիտուտ (հրամանագիր թիվ 1181, կետ 4.1), որը հիմնադրվեց 2006թ. սեպտեմբերի 27-ին: Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղություններից առանձնացվում են գիտահետազոտական, փորձարարա-կոնստրուկտորական աշխատանքների իրագործումն ու արտադրության կազմակերպումը: Նորաստեղծ ինստիտուտի գործառույթներից են նաև Ադրբեջանի և արտերկրի բուհերի բազայի վրա գիտական կադրերի պատրաստման կազմակերպումը: Նախատեսվում էր, որ երկրի ռազմարդյունաբերության ոլորտի աշխատանքները հիմնականում իրականացվելու են այդ ինստիտուտի անմիջական մասնակցությամբ:

2006թ. սկսած՝ երկրի ռազմարդյունաբերության նախարարության ենթակայության տակ դրվեց Բաքվի ավիացիոն արտադրության «Իքլիմ» միավորումը, որը վերանվանվեց «Իքլիմ» գիտաարտադրական ձեռնարկության: «Իքլիմ» գործարանի ստեղծման նախապատմությունը վերագրվում է 1961թ. տարեսկզբին, երբ ստեղծվեց Բաքվի կլիմայական սարքավորումների փորձարարական գործարանը, որը հետագայում մասնագիտացավ օդափոխիչների պատրաստման ոլորտում: 1961-1965թթ. գործարանը դրվեց ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարության ենթակայության տակ:

2006թ. սեպտեմբերից ի վեր ռազմարդյունաբերության նախարարության շրջանակներում են գործում 1957թ. հիմնադրված և նավթագազային, էներգետիկ արդյունաբերությունում ավտոմատացման տեղեկատվական-վերահսկողական համակարգի նախագծման ու մշակման ոլորտում մասնագիտացած «Նավթգազավտոմատ» գիտաարտադրական ձեռնարկությունը, «Ավիա-ագրեգատ» գործարանը (1961թ.), «Սենայեջիհազ» գիտաարտադրական ձեռնարկությունը[1] և այլն: 2006թ. սեպտեմբերի 27-ից նորակազմ նախարարությունում սկսել է գործել նաև 1974թ. հիմնադրված Ադրբեջանի Ազգային տիեզերական գործակալությունը:

Ընդհանուր առմամբ, 2009-2011թթ. ընթացքում Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունը նախատեսում է իրականացնել ողջ երկրում գործող շուրջ 53 օբյեկտների վերակառուցման աշխատանքները, որոնց շրջանակներում, Բաքվից զատ, ռազմարդյունաբերական նոր ձեռնարկություններ կհիմնվեն Գանձակում, Խաչմազում, Նախիջևանում:

[1] «Սենայեջիհազ» գիտաարտադրական ձեռնարկությունը հիմնադրվել է 1956թ.՝ որպես «Պրոմպրիբոր» գիտաարտադրական ձեռնարկություն: Այն հիմնականում մասնագիտացած է հեղուկների ճնշման ու ծախսման հաշվիչների, ազդանշանային համակարգերի արտադրության մեջ:

Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը մտնում է որակապես նոր փուլ

Ադրբեջանի իշխանությունները ոլորտի խթանման հարցում, անշուշտ, չեն կարող հիմնվել երկրի բյուջետային, արտաբյուջետային միջոցների վրա, որոնք բավական սուղ են: Ադրբեջանի ղեկավարությունն այդ խնդրի իրագործումը մեծապես պայմանավորում է այլ երկրների և առաջին հերթին Թուրքիայի, արտաքին ֆինանսական միջոցների ու տեխնոլոգիական պոտենցիալի ներգրավման միջոցով: Թուրքական կողմի շահագրգռվածությունն ու լայն մասնակցությունը գալիս են փաստելու, որ երկու երկրների միջև ռազմավարական հարաբերություններում սկսվել է ռազմատեխնիկական համագործակցության որակապես նոր՝ առավել խորացված փուլ, ինչը վկայում է երկու կարևոր միտումների մասին.

- սեփական ռազմարդյունաբերությունը զարգացնելու Ադրբեջանի իշխանությունների ձգտումը մեծապես պայմանավորված է ոլորտում թուրքական կողմի շահագրգռվածությամբ, այլապես ինչպե՞ս բացատրել այն, որ ադրբեջանական կողմն առանց որևէ լուրջ ֆինանսական ու ռազմատեխնիկական պոտենցիալի՝ սկսում է զարկ տալ սեփական ռազմարդյունաբերության զարգացմանը՝ հաշվի առնելով նաև պրոֆեսիոնալ կադրերի, միջազգային չափանիշներին համապատասխան ենթակառուցվածքների հետ կապված խնդիրները: Թուրքիայի շահագրգռվածությունը խոսում է վերջինիս կողմից Հարավային Կովկասի ռազմաքաղաքական զարգացումներին ներգրավվածության խորացման մասին, ինչի հնարավորությունները շոշափելի են դարձել հատկապես ռուս-վրացական օգոստոսյան պատերազմից հետո,
- ոլորտի զարգացումը, հաշվի առնելով Ադրբեջանի ռազմականացման ներկայիս միտումներն ու նրա ղեկավարության ռազմաշունչ հայտարարությունները, փաստում է ադրբեջանական կողմի՝ Ղարաբաղյան հիմնախնդիրը գլխավորապես ռազմական ճանապարհով լուծելու մտադրությունը, նեղացնում հիմնախնդրի խաղաղ կարգավորման հնարավորության սահմանները:

Երկկողմ ռազմական համագործակցության խորացման ուղղությամբ գործնական քայլեր են իրականացվում վերջին երկու տարիներին: 2008թ. դեկտեմբերի վերջին Ադրբեջան այցելեց Թուրքիայի ԶՈՒ Գլխավոր շտաբի պետի տեղակալ Հասան Իզզիսը՝ երկու երկրների միջև ռազմարդյունաբե-

ության գծով համագործակցության զարգացման հեռանկարների քննարկման նպատակով: Հանդիպման արդյունքում ստորագրվեց երկու փաստաթուղթ, որոնցից մեկը վերաբերում էր թուրքական «Ռոքեթսան» *(Roketsan)*[1] և Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության «Իքլիմ» գիտաարտադրական ձեռնարկության միջև ձեռք բերված համաձայնությանը՝ սպառազինության համատեղ արտադրության վերաբերյալ: Նախատեսվում է, որ 2009թ. մարտին այդ երկու կազմակերպությունները կսկսեն արտադրել 107 և 122 մմ *(107/122 mm Multi Barrel Rocket Launcher_MBRL)* տրամաչափի հրետանային համակարգեր[2], որոնց դետալներն արտադրվելու են «Իքլիմ» ձեռնարկությունում, իսկ հրետանիները՝ «Ռոքեթսան» ընկերությունում: 107 մմ տրամաչափի հրետանային համակարգերը հնարավորություն են տալիս իրականացնել շուրջօրյա մարտական գործողություններ՝ բոլոր եղանակային պայմաններում: TR-107 և TRB-107 տեսակի հրետանիները ի վիճակի են խոցել մինչև 11 կմ հեռահարությամբ թիրախները: Թուրքիայի առաջատար ռազմական ընկերություններից մեկի՝ «Ռոքեթսանի» հետ համագործակցության զարգացումը, որը սպառազինության համաշխարհային շուկայում հայտնի է որպես *Cirit* և *UMTAS* տեսակի կառավարվող և անկառավարելի հրթիռներ, ինչպես նաև հրետանային համակարգեր արտադրող, լուրջ հնարավորություններ է տալիս երկրին տեխնոլոգիական (նաև կադրային) առաջընթաց ապահովելու առումով:

Ադրբեջանի ղեկավարությունը թուրքական «Ռոքեթսանի», ինչպես նաև «Ասելսան» *(Aselsan)*[3] ընկերության հետ համագործակցում է նաև զիշերային տեսանելիության սարքավորումների, ռազմական էլեկտրոնիկայի համատեղ արտադրության բնագավառում: Ադրբեջանական կողմը «Ասելսան» ընկերության հետ ձեռք է բերել պայմանավորվածություն, որի արդյուն-

[1] Թուրքական «Ռոքեթսան» ընկերությունը հիմնադրվել է 1988թ. Թուրքիայի Ռազմարդյունաբերության գործադիր կոմիտեի որոշման հիման վրա: Ընկերությունն ակտիվորեն համագործակցում է տեղական շուրջ 300 և օտարերկրյա 140 ռազմական կազմակերպությունների հետ: Ներկայում կազմակերպությունը մասնակցում է ՆԱՏՕ ծրագրերին, առաջարկում իր ռազմական արտադրանքն ու պաշտպանական ծառայությունները դաշնակից պետությունների զինված ուժերին:

[2] 122 մմ տրամաչափի հրետանային համակարգերից առանձնացվում են TR-122, TRB-122 և TRK-122 (16-30 կմ հեռահարության) տեսակի հրետանիները, որոնք գործում են մինչև 10-40 կմ հեռահարության պայմաններում:

[3] Թուրքական «Ասելսան» ընկերությունը հիմնադրվել է 1975թ.՝ որպես Թուրքիայի ԶՈՒ հեռահաղորդակցական տեխնոլոգիաների արտադրության ու ծրագրերի իրականացման կազմակերպություն: Ներկայում ընկերության արտադրական գործունեությունը ծավալվում է մի քանի հիմնական ուղղություններով՝ ռազմական հեռահաղորդակցություն, պաշտպանական համակարգերի տեխնոլոգիաներ, ռադարային և հետախուզական համակարգեր և միկրոէլեկտրոնիկա ու էլեկտրաօպտիկա: Արտադրում է ավելի քան 90 անուն ռազմական արտադրանք (սարքավորումներ, համակարգեր, և այլն):

քում նախատեսվում է Բաքվում նախաձեռնել հրազենի, գիշերային տեսանելիության սարքավորումների համատեղ արտադրություն: 2010թ. Ադրբեջանը կսկսի իրականացնել սերիական արտադրություն:

Միայն վերջերս Ադրբեջանը ստացել է Թուրքիայի ռազմարդյունաբերության ոլորտում առաջիկա հինգ տարիներին նախատեսվող հիմնական նախագծերին մասնակցելու հրավեր: Թուրքիայի պաշտոնական աղբյուրների հաղորդմամբ, այդ նախագծերի շարքում, որոնցում Ադրբեջանի մասնակցության հարցը կորոշվի 2009թ. հունիսին, նշվում էին *New Generation Wireless Systems*, *Altay National Tank*[1], *MilGem Boat* («Պահակային և հակասուզանավային ռազմանավ» նախագիծ, որը ենթադրում է այս տեսակի ռազմանավի մոդելավորում ու կառուցում), *Pilotless Vehicle* (անօդաչու ինքնաթիռներ, 4 նախագիծ), *Modernized Infantry Rifle* նախագծերը: Երկու երկրների ռազմարդյունաբերական մարմինների միջև բանակցություններ են ընթանում նաև համատեղ ռազմարդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման հեռանկարների շուրջ:

Վերջին շրջանում Թուրքիայի ու Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունների միջև հաճախակի դարձած փոխայցելությունների արդյունքում երկկողմ պայմանավորվածություններ են ձեռք բերվել այդ թվում և ադրբեջանցի զինվորական կադրերի պատրաստման ու մասնագետների որակավորման ուղղությամբ: Ընդգրկված են Թուրքիայի ռազմարդյունաբերության առաջատար արտադրական այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են «Ասելսանը», *FNSS* թուրք-ամերիկյան ռազմական ընկերությունը[2], Թուրքիայի «Մեքենաշինական և քիմիական արդյունաբերության կորպորացիան (*MKEK)*[3], «Ռոքեթսանը», ինչպես նաև *SELEX*

[1] 2004-2005թթ. կեսերին Թուրքիայի Ռազմարդյունաբերության դեպարտամենտի կողմից նախաձեռնվեց *Turkey's National Main Battle Tank Project-ը* (Թուրքիայի առաջին «ազգային հիմնական մարտական մեքենայի» արտադրության նախագիծ), որի իրականացման համար 2007թ. պայմանագիր ստորագրվեց Թուրքիայի առաջատար մեքենաշինական (քաղաքացիական և ռազմական) գործարաններից մեկի «Օտոկար» ընկերության հետ: Նախագիծը, որը սկզբնական հաշվարկով պահանջելու է $500 մլն, հետագայում ստացավ «Ալթայ տանկ» անվանումը: Տևելու է 6 և կես տարի: «Օտոկար» գործարանը արտադրում է շուրջ 20 անուն քաղաքացիական (ավտոբուսներ, բեռնափոխադրիչներ) և 9 անուն ռազմական նշանակության մեքենաներ (մարդատար/փոխադրիչ, զրահապատ մարտական արագընթաց մեքենաներ):

[2] *FNSS Defense systems* թուրք-ամերիկյան համատեղ ռազմական կազմակերպությունը հիմնադրվել է 1988թ.: Այն հիմնականում մասնագիտացած է զրահապատ մարտական ու փոխադրիչ մեքենաների, նաև դրանց համար նախատեսված միջին տրամաչափի հրազենային արտադրության մեջ:

[3] *MKEK_Mechanical and Chemical Industry Csorporation*- Թուրքիայի «Մեքենաշինական և քիմիական արդյունաբերության կորպորացիայի հիմնադրումը վերագրվում է դեռևս Օսմանյան կայսրությունում հրետանային կորպուսների ձևավորման ժամանակաշրջանին: Կարելի է առանձնացնել Արկերի *(Ammunition factory),* հրետանային համակարգերի արտադրության, միջին տրամաչափի զինատեսակների, հրազենի ու պայթուցիկ սարքերի արտադրության մեջ մասնագիտացած գործարանները: «Մեքենաշինական և քիմիական արդյունաբերության կորպորացիան ընդհանուր առմամբ արտադրում է շուրջ 250 անուն ռազմական արտադրանք (սարքավորումներ, համակարգեր, ռազմատեխնիկա)՝ հրետանային համակարգեր, հրազեն, պայթուցիկներ, ռազմամթերք:

ռազմական նշանակության հաղորդակցությունների արտադրության միջազգային կազմակերպությունը (կենտրոնականյանը՝ Իտալիայում)։

Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունը նախատեսում է լուրջ քայլեր ձեռնարկել սեփական ռազմարդյունաբերական արտադրանքն արտաքին շուկա արտահանելու, միջազգային սպառազինության ցուցահանդեսներում ներկայացնելու ուղղությամբ, ինչի մեջ կրկին զգալի է թուրքական կողմի միջամտությունը։ Նախատեսվում է 2009թ. Թուրքիայում անցկացվելիք սպառազինության ցուցահանդեսում ներկայացնել սեփական ռազմարդյունաբերության առաջին արտադրանքը։

Նախատեսվում է, որ 2009-2010թթ. Ադրբեջանը տիեզերք կուղարկի կապի առաջին ադրբեջանական արբանյակը՝ «Ազերսատը»։ Նախնական հաշվարկներով՝ կպահանջվի շուրջ $80-100 մլն։

Համագործակցության խորացման նոր ձևաչափեր այլ երկրների հետ

Թուրքիայից զատ, Ադրբեջանի ռազմարդյունաբերության ոլորտի զարգացման հարցում հետաքրքրված են նաև այլ պետություններ։ Ադրբեջանական կողմը նախորդ երկու տարիների ընթացքում վարած բանակցությունների արդյունքում լուրջ ձեռքբերումներ է ունեցել Հարավաֆրիկյան Հանրապետության հետ համագործակցության զարգացման հարցում։ Երկկողմ պայմանավորվածությունների համաձայն, 2009թ. Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունը կսկսի «Մատադոր» և «Մարադոր» տեսակի զրահապատ տեխնիկայի սերիական արտադրությունը։ Քայլեր են ձեռնարկվում զրահապատ փոխադրիչ մեքենայի (ԶՓՄ-БТР) և հետևակի մարտական մեքենայի (ՀՄՄ-БМП) արդիականացման ուղղությամբ։

Ադրբեջանական կողմը լուրջ պայմանավորվածություններ է ձեռք բերել նաև Պակիստանի հետ, որի արդյունքում առաջիկա տարիներին Պակիստանից ներմուծված տեխնոլոգիաների հիման վրա կարտադրի ավիացիոն ռումբեր, տանկերի ու հրետանու համար նախատեսված ռազմամթերք։ Համատեղ ջանքերով լուրջ քայլեր են ձեռնարկվում նաև տեղական անօդաչու ինքնաթիռների արտադրության ուղղությամբ, որոնք պաշտոնական տվյալներով, կարտադրվեն 2009թ.։ Իսկ 2016թ. նախատեսվում է ադրբեջանական ռազմական ուղղաթիռների թողարկումը։ 2009թ. հունվարի 23-28-ին աշխատանքային այցով Պակիստանում էր գտնվում Ադրբեջանի ռազմարդյունաբերության փոխնախարար Թոֆիկ Ռաֆիևի գլխավորած պատվիրակությունը։ Այցելության նպատակն էր երկու երկրների ռազմարդյունաբերական մարմինների միջև համագործակցության որոշակի

ոլորտների հստակեցումը, այցելությունները Պակիստանի ռազմարդյունաբերության նախարարության ենթակայության տակ գործող ռազմական ձեռնարկություններ:

Ադրբեջանի ռազմարդյունաբերության զարգացման հարցում շահագրգռված է նաև ռուսական կողմը: Բանակցություններն ու քննարկումներն ընթացքի մեջ են: 2006թ. աշնանը Ադրբեջանում ՌԴ նախկին դեսպան Վասիլի Իստրատովի հայտարարության համաձայն, Ռուսաստանը ռազմարդյունաբերական ոլորտում մեծ փորձ ունի և պատրաստ է աջակցել Ադրբեջանի ռազմարդյունաբերության նորաստեղծ ոլորտի զարգացմանը, զգալի ավանդ ունենալ մասնավորապես ռազմատեխնիկական, տեխնոլոգիաների գծով մասնագիտացման հարցում: Նշենք, որ Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության ներքո գործող ներկայիս ձեռնարկություններն ու ինստիտուտները ստեղծվել ու զարգացել են խորհրդային ժամանակաշրջանում, որոնց արդիականացման ու արտադրողական պոտենցիալի զարգացման հարցում ադրբեջանցիների համար անգնահատելի կլինի ռուսական կողմի մասնակցությունը: Ռազմարդյունաբերության ոլորտում ռուս-ադրբեջանական համագործակցության կարևոր ուղղություններից մեկն էլ, իհարկե, վերաբերում է որակյալ կադրերի վերապատրաստմանը:

Ադրբեջանը շարունակում է խախտել ԵՍԶՈՒՊ-ը

Վերջին տարիներին միջազգային ռազմաքաղաքական հարաբերություններում զոյացած լարվածությունը զգալի ազդեցություն ունեցավ այդ թվում և Հարավկովկասյան տարածաշրջանային անվտանգության և կայունության վրա: 2001թ. սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո, նույն թվականի դեկտեմբերի 13-ին ԱՄՆ նախկին նախագահ Ջ.Բուշը հայտարարեց ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև 1972թ. մայիսի 26-ին ստորագրված Հակահրթիռային պաշտպանության համակարգերի սահմանափակման մասին պայմանագրից ամերիկյան կողմի միակողմանի դուրս գալու մասին, ինչը միանշանակ խորհրդանշում էր Սպիտակ տան նոր ռազմավարությունը: Վերջին մի քանի տարիներին Արևելյան Եվրոպայում (Չեխիա, Լեհաստան) ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգերի տեղակայման հարցում Վաշինգտոնի նախաձեռնությունների արդյունքում 2007թ. ապրիլի 27-ին ՌԴ այդ ժամանակվա նախագահ Վ.Պուտինը հայտարարեց ռուսական կողմի՝ Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի հնարավոր դադարեցման մասին, որը հաստատող փաստաթուղթն ի վերջո ստորագրվեց հուլիսի 13-ին:

Վերջին շրջանում միջազգային ռազմաքաղաքական հարաբերություններում տարաձայնությունների խորացումը, պաշտոնական Մոսկվայի կողմից ԵՍԶՈՒՊ գործունեության միակողմանի դադարեցման որոշումը արտաքին լուրջ պլացդարմ հանդիսացան Ադրբեջանի իշխանությունների կողմից այդ պայմանագրի պահանջների խախտմանն ուղղված քաղաքականության խորացման համար: Մյուս կողմից՝ վրաց-ռուսական պատերազմով Հարավային Կովկասում ամերիկյան դիրքերի որոշակի թուլացման, վատթարացող թուրք-ամերիկյան հարաբերությունների ու ռուսական ազդեցության ուժեղացման արդյունքում ռուսական կողմը նոր հնարավորություններ ստացավ վերահսկելու տարածաշրջանի մեկ այլ՝ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացը: Տարածաշրջանում ռուսական ռազմաքաղաքական դիրքերի ընդլայնման, Ռուսաստան-Թուրքիա դաշինքի ձևավորման (տեղին է հիշատակել ս.թ. փետրվարի 13-ին Ռուսաստանի ու Թուրքիայի նախագահների կողմից ստորագրված հռչակագիրը) և Թուրքիայի անմիջական շահագրգռվածության հետևանքով Ադրբեջանի ղեկավարությունը արտաքին լուրջ հենարան է ստանում երկրի ռազմական պոտենցիալի, նորաստեղծ ռազմարդյունաբերության զարգացման առումով[1]:

Հիմնական հետևություններ

Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության ստեղծումը, առաջիկա տարիներին այս ուղղությամբ նախատեսվող ծրագրերն առնվազն մտահոգիչ են ողջ տարածաշրջանի կայունության պահպանման համար: Այն նոր լիցք կհաղորդի Ադրբեջանի ռազմականացման գործընթացին, ինչը լուրջ մարտահրավեր է վրաց-ռուսական «Հնգօրյա պատերազմից» հետո ձևավորված Հարավային Կովկասի ռազմաքաղաքական ներկայիս փխրուն իրադրության համար: Առաջին բացասական դրսևորումներն արդեն արձանագրվել են վերջին շրջանում հայ-ադրբեջանական

[1] Իհարկե, այստեղից չի հետևում, թե Հարավային Կովկասի կարևոր հիմնահարցերում Ռուսաստանի ու Ադրբեջանի շահերը համընկնելու են: Ռուսական կողմը լավ է գիտակցում, որ ռուս-թուրքական տանդեմի համատեքստում Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում ադրբեջանական կողմի դիրքերի ուժեղացումն ուղղակիորեն կնպաստի տարածաշրջանի ռազմաքաղաքական զարգացումներում Թուրքիայի ներգրավվածության մեծացմանն ու ռուսական դիրքերի աստիճանական թուլացմանը: Արդյունքում՝ ռուսական կողմը կփորձի Հայաստանի հետ հարաբերությունների խորացմամբ որոշակիորեն պահպանել առկա քաղաքական, ռազմական հավասարակշռությունը (իսկ թե դա որքանով կստացվի, դժվար է ասել):

սահմանի տարբեր հատվածներում ադրբեջանական կողմից հրադադարի ռեժիմի խախտման դեպքերի ակտիվացմամբ: Ադրբեջանի ռազմարդյունաբերության ոլորտի նախաձեռնումը լրջորեն կխախտի Հայաստանի ու Ադրբեջանի միջև առկա ռազմական հավասարակշռությունը, այդ հավասարակշռությունը երաշխավորող ԵՍԶՈՒՊ քվոտաները. սպառնալիքներ, որոնք միջազգային հանրությունից պահանջում են համարժեք արձագանք ու գնահատականներ՝ տարածաշրջանի հնարավոր ապակայունացումից խուսափելու համար:

«ԳԼՈԲՈՒՍ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221՝ տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 21.04.2009թ.
Թիվ 2, 2009թ.
Տպաքանակը՝ 200։

Ֆորմատը՝ 70x100 1/16։ Պայմանական 15 մամուլ։
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում